



ԵԱՀԿ Երևանի գրասենյակ



Հայաստանի Հանրապետություն  
Աշխատանքի և սոցիալական հարցերի  
նախարարություն

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական  
ծառայողների պարտադիր վերապատրաստման  
դասընթացների  
“Մարդկանց շահագործումը (թրաֆիքինգը)  
և դրա դեմ պայքարը”  
ուսումնական մոդուլ

ԵՐԵՎԱՆ

2011

1

## **ՆԱԽԱԲԱՆ**

Սույն ուսումնական մոդուլը նախատեսված է Հայաստանի Հանրապետության սոցիալական ոլորտի և հարակից ոլորտների քաղաքացիական ծառայողների համար: Այն նպատակ ունի ներկայացնելու մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հիմնախնդիրը, երևույթի տարբեր դրսևորումները, զարգացման միտումները, պայքարի միջոցները, ազգային և միջազգային օրենսդրությունը, թրաֆիքինգի գենդերային տեսանկյունները, այն ծնող պատճառները՝ ներառյալ ընտանեկան բռնությունը և հետևանքները:

Միաժամանակ հնարավորություն է տրվում տարբեր մասնագիտական խմբերին ծանոթանալ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) կանխարգելմանն ու զոհերի վերականգնմանն ուղղված աշխատանքների կազմակերպման հիմունքներին, դիտարկել թրաֆիքինգը որպես սոցիալական խնդիր, վեր հանել այն պրոֆիլային խմբերը, որ առավել ռիսկային են թրաֆիքինգի տեսանկյունից, նախանշել թրաֆիքինգի զոհերի սոցիալական օգնության համակարգի կատարելագործման ուղիները:

Ձեռնարկը պատրաստվել է “Թրաֆիքինգի դեմ պայքարի աջակցության և ռեսուրս կենտրոն” ծրագրի շրջանակներում: Ծրագիրը իրականացվում է ԵԱՀԿ Երևանի գրասենյակի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ և ֆինանսավորվում է Շվեդիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և ԱՄՆ կառավարությունների կողմից:

## ԲՈՎԱԴՆԱԿՈՒԹՅՈՒՆ

### ԹԵՄԱ 1. ՄԱՐԴԿԱՆՑ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ (ԹՐԱՖԻՔԻՆԳԻ) ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

1. Ներածություն
2. Ստրկության/մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ձևերը հասարակական զարգացման տարբեր փուլերում
3. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դրդապատճառներն ու հիմնական ուղղությունները
4. Ժամանակակից ստրկության /մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ձևերը, թիրախ խմբերը

### ԹԵՄԱ 2. ՄԱՐԴԿԱՆՑ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ (ԹՐԱՖԻՔԻՆԳԸ) ՈՐՊԵՍ ՄԱՐԴՈՒ ՀԻՄՆԱԴԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՏՆԱՀԱՐՈՒՄ: ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Մարդկանց շահագործումը (թրաֆիքինգը) և մարդու իրավունքները
2. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի միջազգային օրենսդրությունը
3. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի ազգային օրենսդրությունը
4. Երեխաների շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի օրենսդրության առանձնահատկությունները
5. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի հնարավոր ուղիները

### ԹԵՄԱ 3. ՄԱՐԴԿԱՆՑ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ (ԹՐԱՖԻՔԻՆԳԻ) ԶՈՀԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՎԱՐՎՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարում Հայաստանի Հանրապետության ներգրավման նախադրյալները
2. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի գործընթացը Հայաստանի Հանրապետությունում
3. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի ոլորտում սոցիալական քաղաքականության առանձնահատկությունները, ոլորտը կարգավորող իրավական ակտերը, զոհերին ցուցաբերվող աջակցությունը

### ԹԵՄԱ 4. ՄԱՐԴԿԱՆՑ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ (ԹՐԱՖԻՔԻՆԳԸ) ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՏԵՄԱՆԿՅՈՒՆՆԻՑ

1. Գենդեր հասկացությունը և մարդկանց շահագործումը (թրաֆիքինգը)
2. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) գենդերային տեսանկյունները և առանձնահատկությունները

### ԹԵՄԱ 5. ԲՈՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԽՆԴԻՐ

1. Բոնությունը և բոնության տեսակները
2. Գենդերային բոնություն և գենդերային բոնության խնդիրը և բոնության հետևանքները
3. Կանանց նկատմամբ բոնության կանխարգելման իրավական կարգավորումը
4. Բոնության և մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերին աջակցության տրամադրումը և նրանց վերականգնումը

Գրականության ցանկ

## **ԹԵՄԱ 1. ՄԱՐԴԿԱՆՑ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ (ԹՐԱՖԻՔԻՆԳԻ) ՀԻՄՆԱԽՆԴԻՐ**

### **1. Ներածություն**

**2. Ստրկության/ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ձևերը հասարակական զարգացման տարբեր փուլերում**

**3. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դրդապատճառներն ու հիմնական ուղղությունները**

**4. Ժամանակակից ստրկության /մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ձևերը, թիրախ խմբերը**

### **1. Ներածություն**

Թրաֆիքինգի երևույթն ունի հին պատմություն և լայն աշխարհագրություն: Այն կարելի է բնութագրել որպես ժամանակակից ստրկության մի տեսակ, որն ուղեկցվում է մարդու իրավունքների ամենադաժան խախտումներով:

21-րդ դար թրաֆիքինգի "բարեհաջող" փոխադրման և, ըստ էության, ստրկության վերածննդի դրդապատճառները տարբեր են, ինչպես տարբեր են դրա դրսևորման ձևերը: Իհարկե, առաջին հերթին պետք է նշենք, որ երևույթը մեծ տարածում գտավ հետխորհրդային երկրների տարածքում, որտեղ քաղաքատնտեսական ճգնաժամի պատճառով ստեղծվեց բարդ սոցիալական իրավիճակ: Մակայն հաշվի առնելով այն, որ մարդկանց առևտուրն ունի միջազգային բնույթ, խոսել թրաֆիքինգի մասին այսուհանդերձ պետք է համաշխարհային համատեքստում: Թրաֆիքինգի հետ այս կամ այն չափով բախվում են բոլոր երկրները՝ աղքատ, զարգացող և զարգացած: Ըստ էության, թրաֆիքինգի գոհ կարող են դառնալ թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք և թե՛ երեխաներ: Սեռական շահագործումը, հարկադիր աշխատանքը, երեխաների աշխատանքի շահագործումը, պարտապանի ստրկացումը, մուրացկանության մեջ ներգրավումը և այլն՝ այս ամենը մի հանցագործության՝ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) տարբեր դրսևորումներն են:

Աշխարհի գրեթե բոլոր պետությունները ներգրավված են մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարում, քաջ գիտակցելով երևույթի տարածման վտանգերը. որոնք սպառնում են պետական իշխանության կայունությանը և նպատում է հանցագործ ցանցերի ամրապնդմանը: Բայց, չնայած ձեռնարկվող քայլերին և ընդունվող փաստաթղթերին ("Անդրազգային հանցավորության դեմ պայքարի մասին" ՄԱԿ-ի կոնվենցիան և նրան կից երկու արձանագրությունները, ԵԽ-ի "Թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին" կոնվենցիան, "Երեխաների իրավունքների մասին" ՄԱԿ-ի կոնվենցիան և այլն), թրաֆիքինգի բացահայտվող դեպքերը պայքարի նոր ձևերի մշակման անհրաժեշտությունն են թելադրում:

Հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխությունների հետ մեկտեղ փոխվում են նաև շահագործման եղանակները և կազմակերպիչների վարվելակերպը: Դա, անշուշտ, բարդացնում է երևույթի գնահատման գործընթացը՝ սկսած նախնական

փուլից, որին մասնակցում են ամենատարբեր մասնագետներ և անհատներ մինչև վերջնական նույնացումը, որի մասին որոշումը կայացնում է դատարանը: Նախնական նունացումը – առաջին ահագանգն է: Այս առումով ստորև բերված երկու ցուցիչները շատ կարևոր են իրավիճակի նախնական գնահատականը տալու համար: .

- մարդու գործունեությունը վերահսկվում է բռնության կամ բռնության սպառնալիքի միջոցով;

- մարդը գտնվում է տվյալ տեղում և զբաղվում է տվյալ գործունեությամբ իր կամքին հակառակ և ի գորու չէ իրավիճակը փոխել:

### **Պատմական ակնարկ**

Ստրկությունը հնագույն ինստիտուտներից է, որն իրենից ներկայացնում է մարդու նկատմամբ սեփականության իրավունքի իրականացում: Այն շահագործման առավել բիրտ ձևն է, որը դարձնում է մարդուն, արտադրության միջոցների հետ մեկտեղ, ստրկատիրոջ սեփականությունը և որի պարագայում անձը չունի որևէ իրավունք, չի ստանում որևէ փոխհատուցում կատարած աշխատանքի դիմաց և այդ իսկ պատճառով չունի որևէ տնտեսական շահագրգռվածություն:

Ժամանակակից ստրկության հարցերով առաջատար մասնագետ Քեյվին Բեյլը համարում է, որ մարդիկ ստրկանում են բռնության միջոցով և պահվում են գերության մեջ շահագործման նպատակով: Եվ չնայած, որ շատերի կարծիքով երևույթը մնացել է անցյալում, նորագույն պատմությունը վկայում է, որ ստրկատիրության պրակտիկան մեր օրերում էլ լայնորեն տարածված է, հատկապես այնտեղ, որտեղ հնարավորություն կա օգտվելու ծանր սոցիալական պայմաններից և բնակչության աղքատությունից: Բեյլի գնահատականներով, ժամանակակից աշխարհում ավելի քան 27 մլն մարդ գտնվում է ստրկության մեջ<sup>1</sup>:

Պատմական զարգացումներին զուգահեռ, ինչպիսիք են ստրուկների հոսքի նվազումը և չղադարող ապստամբությունները, ի հայտ են գալիս նաև տնտեսական գործոններ, որոնք դրդում են տերերին որոնել շահագործման նոր ձևեր: Ակնհայտ է դառնում, որ ստրուկ-արտադրողին ինչ-որ չափով պետք է շահագրգռել իր աշխատանքի արդյունքների նկատմամբ, դրանով իսկ բարձրացնելով շահագործման արդյունավետությունը: Հենց այդ ժամանակ է, որ ստրուկները սկսում են զբաղվել հողագործությամբ, ամրացվում են այդ հողին և աստիճանաբար մերվում գաղութների հետ: Տնտեսական գործոններով պայմանավորված այս փոփոխությունը ջնջում է առկա տարբերությունները ստրուկի և գաղութի բնակչի միջև:

13-րդ դարում երևույթը հետզհետե սկսում է վերանայ, սակայն 17-19 դարերում այն նորից գլուխ է բարձրացնում: Նշված շրջանում ստրուկների ձեռք բերման աղբյուրներն են Ասիայի, Աֆրիկայի և Ամերիկայի երկրները:

Կապիտալիստական հարաբերությունների զարգացումը բացահայտում է, որ ստրուկի աշխատանքը անորակ է և անարդյունավետ: Հասարակության լայն

<sup>1</sup>Օдноразовые люди. Новое рабство в системе глобальной экономики, 1999г., University of California Press, 1999

շերտերի, ինչպես նաև ստրուկների դիմադրության ճնշման տակ սկսվում է ստրկության վերացման գործընթացը, որը շարունակվում է մինչև XX-րդ դարի կեսը: 1956 թվականին Ժնևում կայանում է ստրկության դեմ պայքարին նվիրված կոնֆերանսը, որի ժամանակ մասնակից պետությունները ընդունում են «Ստրկության, ստրկավաճառության, ստրկությունը հավասարազոր ավանդույթների վերացման մասին» լրացուցիչ կոնվենցիան: Հաշվի առնելով այն, որ ստրկությունը գոյություն ունի հասարակության, իսկ հետագայում՝ պետության առաջացման պահից, կարելի է ասել, որ պայքարի գործընթացը «մի փոքր» ուշացել է: Միաժամանակ հարկ է նշել, որ չնայած այս չարիքի դեմ ձեռնարկվող միջոցներին, խնդիրը շարունակում է մնալ անհանգստացնող:

## **2. Ստրկության/ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ձևերը հասարակական զարգացման տարբեր փուլերում**

Ստրկության ձևերը պատմական տարբեր ժամանակաշրջաններում եղել են տարբեր: Այդ ձևերի առաջացման և հաստատման հարցում իրենց դերն ու նշանակությունն են ունեցել երկրների ու ժողովուրդների սոցիալ-տնտեսական զարգացման առանձնահատկությունները:

Ընդհանուր առմամբ, մարդկությունը իր պատմության ողջ ընթացքում անցել է ստրկության մի քանի շրջան՝ նահապետական, անտիկ (դասական), ֆեոդալական, կապիտալիստական, ժամանակակից:

Նահապետական ստրկությունը՝ ստրկության առաջին, նախնական շրջանն էր, որի ժամանակ ստրուկը հանդիսանում էր իրեն տնօրինող ընտանիքի իրավագուրկ անդամ: Նա ապրում էր այդ ընտանիքի հետ մի ծածկի տակ, սակայն կատարում էր ավելի ծանր աշխատանք, քան ընտանիքի մյուս անդամները: Տնտեսության արագ զարգացման արդյունքում այն ձևափոխվել է, դառնալով անտիկ (դասական) ստրկություն, և կապվել է ապրանքատնտեսության հետ: Այդ շրջանում անձը ծայրաստիճան ճնշման տակ վերածվել է «իրի, առարկայի»: Բնականաբար, դա երկար տևել չէր կարող, պետք է գար մի ժամանակ, երբ ծառան, գիտակցելով իր կարգավիճակը, ըմբոստանար:

Միջնադարում տարածում ստացավ այսպես կոչված ֆեոդալական ստրկությունը, երբ մարդը, կապվելով հողին, սկսեց այն մշակել, վճարելով հողատիրոջը որոշակի տուրք: Իսկ ստրկության տարածման նոր՝ կապիտալիստական շրջանը, սկսվեց գաղութների առաջացման և զարգացման արդյունքում, երբ թափ առավ Նոր Աշխարհի հսկայական հողատարձքների սեփականացման գործընթացը, որն առաջացրեց աշխատուժի մեծ պահանջարկ: Ամերիկայի մայր ցամաք աշխարհի բոլոր ծայրերից ժամանած և բնակություն հաստատած առավելապես քրեականացված տարրերը ցանկանում էին տիրապետել հողին, բայց չաշխատել այդ հողի վրա: Արդյունքում, 17-19-րդ դարերում, երբ սկսվեց արդյունաբերական հեղաշրջում, գլուխ բարձրացրեց ստրկավաճառությունը, որը շարունակվեց ըստ էության, մինչև 20-րդ դարի կեսերը: Մեր օրերում ստրկությունը բոլոր երկրներում համարվում է հակաօրինական:

Վերջին երկիրը, որտեղ ստրկությունը պաշտոնապես վերացվեց, Մավրիտանիան էր: Դա տեղի է ունեցել 1980 թվականին:

### **3. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դրդապատճառներն ու հիմնական ուղղությունները**

Ստրկատիրական հասարակարգը վաղուց արդեն վերացել է: Դրանից հետո պատմությունը տեսել է և՛ բռնատիրություն, և՛ կայսրություն, և՛ հանրապետություն, տեսել է կապիտալիզմ, ֆաշիզմ, սոցիալիզմ, ժողովրդավարություն, բայց թրաֆիքինգը, տեղափոխվելով դարից դար և երկրից երկիր, հասել է մեր օրերը: Ժամանակակից ստրկության՝ թրաֆիքինգի, տարբերությունը ավանդական ստրկությունից այն է, որ՝

- մեր օրերում երբևիցե փորձ չի արվել արդարացնել երևույթը;
- այսօր ստրկատիրությունը դիտվում է որպես հանցագործություն;
- այսօր ստրկության վիճակում հայտնված անձինք հսկայական շահույթի աղբյուր են հանդիսանում

Թրաֆիքինգի առաջացման պատճառները տարբեր են. նրանք կարող են լինել՝ ա/ արտաքին (ներքին և արտաքին շուկայում կոմերցիոն սեքսի պահանջարկ, երկրների զարգացման մակարդակների տարբերություններ, տնտեսական հնարավորությունների սահմանափակում, աղքատություն, պետության կողմից ոչ բավարար աջակցություն, գենդերային անհավասարություն, ընտանեկան ճգնաժամ, բռնություն, անբարենպաստ ընտանիքների աճ, սոցիալական որբություն և այլն);

բ/ ներանձնյա (էմոցիոնալ անհասունություն, հեշտ գումար վաստակելու ձգտում, չափազանց վստահություն ուրիշին, տեղեկացվածության ցածր մակարդակ, բարոյական դեգրադացիա, հակում դեպի ռիսկային վարքագիծ, նախկինում տեղի ունեցած բռնության արդյունքում ձեռք բերած հոգեբանական տրավմա և այլն):

Այնպիսի գործոններ, ինչպիսիք են երկրների իրավական համակարգի անկատարությունը (կան երկրներ, որտեղ “թրաֆիքինգ” հասկացությունը օրենսդրորեն ամրագրված չէ), ավանդապաշտությունը (կան երկրներ, որտեղ ընդունված է հարուստ ընտանիքներում ունենալ գոնե մեկ ստրուկ, ընդ որում նա պետք է լինի այլ դավանանքի), քաղաքական կամքի յուրահատուկ դրսևորումները (20-րդ դարի տոտալիտար պետությունների վարած քաղաքականությունը և դեկավարների կամայականությունը) նույնպես թրաֆիքինգի առաջացման պատճառ են հանդիսանում:

Այսօր տարածված են մարդկանց շահագործման մի քանի եղանակներ, որոնք պայմանավորված են նրանով, թե որ սոցիալական խմբին է պատկանում անձը. տղամարդիկ կատարում են ծանր ֆիզիկական աշխատանքներ, կանանց ենթարկում են սեռական և աշխատանքային շահագործման, իսկ երեխաներին ներգրավում են մարմնավաճառության, հարկադիր աշխատանքի կամ մուրացկանության մեջ :

Երևույթը ինքնին թաքնված է և դժվար բացահայտվող, ուստի և, ինչպես գրում է Քևին Բեյլզը. “Հնարավոր է, որ ձեր կոշիկների կամ ձեր սուրճի մեջ ավելացվող շաքարի պատրաստման համար օգտագործվել է ստրուկի աշխատանքը: Ստրուկները շարել են այն գործարանի պատը, որտեղ արտադրվել է ձեր հեռուստացույցը... Ստրկությունը թույլ է տալիս իջեցնել ապրանքի գինը ողջ աշխարհում: Սա է պատճառը, որ ստրկությունն այսօր այդքան գրավիչ է”<sup>2</sup>:

#### **4. Ժամանակակից ստրկության /մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ձևերը, թիրախ խմբերը**

Թվում է, թե ամեն մի նոր դարաշրջան մարդկությանը նետում է նոր մարտահրավերներ: Թրաֆիքինգի, որպես ժամանակակից ստրկության ձևերը բազմաթիվ են և բազմատեսակ: Բացի ավանդականից, որի դեպքում մի մարդ ուղղակի պատկանում է մյուսին որպես առարկա, գոյություն ունեն նաև կախվածության այլ ձևեր: Դրանցից ամենատարածվածը պարտապանի ստրկացումն է, երբ մարդն աշխատում է պարտքը մարելու համար, սակայն արդյունքում ստացվում է հակառակը. պարտքը գնալով ավելանում է, քանի որ աշխատավարձը շատ ցածր է, իսկ տոկոսադրույքը՝ բարձր, բացի այդ, պարտքատերը աշխատավարձից պահում է աշխատողի սննդի և տան վարձակալության գումարը:

Այսօր աշխարհում մեծ տարածում է գտել միգրանտ տղամարդկանց թրաֆիքինգը (Հայաստանում նույնպես ուսումնասիրություններ են արվում, որոնք դեռ ամփոփված չեն): Տղամարդը, չկարողանալով իր երկրում հոգալ ընտանիքի կարիքները, փորձում է աշխատանք գտնել արտասահմանում: Մովորաբար, խնդիրներն առաջանում են այն դեպքում և այն պահից, երբ տվյալ անձը օգտվում է հավաքագրողի ծառայությունից, որը հաճախ կապված է լինում հանցավոր խմբերի հետ: Արդյունքում մարդը հայտնվում է կախվածության մեջ գործատուից: Նրանից վերցնում են փաստաթղթերը, չեն վարձատրում, սահմանափակում են տեղաշարժի ազատությունը, ենթարկում ծեծի: Գոյություն ունեն նույնիսկ գնացուցակներ երկրից երկիր տեղափոխումը կազմակերպելու համար: Դրանով զբաղվում են հանցավոր խոշոր խմբերը: Սա թրաֆիքինգի ճանապարհներից մեկն է, բայց ոչ միակը: Թրաֆիքինգի կազմակերպիչները գտնում և հավաքագրում են ապագա զոհերին տարբեր ճանապարհներով: Նրանք ոչ միայն հայտարարություն են տալիս ՋԼՄ-ներում, առաջարկելով լավ աշխատանք բարձր աշխատավարձով, այլև օգտվում են տարբեր անբարեխիղճ կազմակերպությունների ծառայություններից՝ տուրիստական, մոդելային և այլն: Նրանք շահարկում են բարեկամական, ընկերական կապերն ու հարաբերությունները, որպես միջոց կիրառում են նույնիսկ անձի առևանգումը: Որպես կանոն, հանցագործության այս տեսակը ոչ միայն չի պահանջում մեծ ներդրումներ, այլև գրեթե բացառում է որևէ ռիսկի գործոն:

<sup>2</sup> Одноразовые люди, Новое рабство в системе глобальной экономики, 1999г., University of California Press, 1999



Հարկ է նշել, որ մարդկանց վաճառքի և հարկադիր աշխատանքի առումով առավել խոցելի են կանայք և աղջիկները: Ասպես կոչված “միգրացիայի ֆեմինիզացումը” մեծապես նպաստում է նրան, որ ավելի ու ավելի շատ թվով կանայք դառնում են թրաֆիքինգի զոհ: Որոշ տվյալներով հարկադիր տնտեսական շահագործման զոհերի ընդհանուր թվի 56%-ը կազմում են կանայք և աղջիկները: Ինչ վերաբերվում է կոմերցիոն և սեռական շահագործմանը, որի ասպեկտներից մեկը զինված հակամարտություններն են, երբ կանայք զինծառայողների շրջանում դառնում են սեռական առքուվաճառքի առարկա, ապա այստեղ կանայք կազմում են զոհերի ընդհանուր թվի 98%-ը: Ավելացնենք, որ կանանց ստրկացման դրսևորման ձևերից են պարտադրված ամուսնությունը (այդ թվում հարսնացուի առուվաճառքը, կնոջը բռնի կերպով մարմնավաճառության մեջ ներգրավելը):

Կանանց ավելի անպաշտպան և խոցելի լինելու հիմքում ընկած են կանանց և տղամարդկանց միջև գոյություն ունեցող գենդերային տարբերությունները: Գործատուների համար կանայք նախընտրելի են, որոհետև ավելի էժան աշխատուժ են, ավելի հեշտ են վերահսկվում և ավելի հնազանդ են: Խտրականությունը հանդիպում է ամենուր: Առանձին թեմա է կանանց վիճակը աշխատանքի շուկայում, որտեղ խտրականությունն ունի հետևյալ դրսևորումները.

- գործազուրկների շրջանում անհամեմատ մեծ է կանանց թիվը,
- կանանց վարձատրությունը ավելի ցածր է, աշխատանքի ընտրության հնարավորությունը սահմանափակ,
- հաճախ գործում են գենդերային կարծրատիպերը, ըստ որոնց կինը ավանդականորեն պետք է զբաղվի տնային տնտեսությամբ,
- առաջարկվող աշխատանքը մասնագիտացում չի պահանջում և շատ ցածր է վարձատրվում: Այն ստվերային է և մեծամասամբ չի համապատասխանում սահմանված աշխատանքային նորմերի պահանջներին,
- կանանց աշխատանքը ավելի անհատական է և մեկուսացված, նրանց համար անմատչելի են տեղեկատվական ցանցերն ու սոցիալական աջակցությունը:

Այս ամենը նպաստում է կանանց սոցիալապես խոցելի դառնալուն, հետևաբար բարձրացնում է թրաֆիքինգի կազմակերպիչների ձեռքն ընկնելու ռիսկը:

Խտրականության մեկ այլ ձև է կանանց համար միգրացիայի օրինական ճանապարհների բացակայությունը կամ սղությունը. արտագնա աշխատանքի առաջարկը սովորաբար ուղղված է լինում տղամարդկանց, իսկ կանայք ստիպված են լինում փնտրել աշխատանքի տեղավորման այլ ճանապարհներ: Եվ ընդհանրապես, կանանց համար մատչելի աշխատանքի բնույթը և միգրացիայի հնարավորությունները հաճախ ստիպում են նրանց դիմել կասկածելի հեղինակություն ունեցող հավաքագրողների:

Եվ վերջինը. Ժամանակակից ստրկության/շահագործման հիմնախնդրի համատեքստում հարկ է հիշատակել հարկադրանքի ևս մեկ ձև՝ այսպես կոչված “կամավոր” ստրկությունը/շահագործումը, որի շարքում են.

1. Ընտանեկան շահագործումը՝ երբ տղամարդը, հազվադեպ կինը, արգելում է զուգրնկերոջը աշխատել (ուղղակիորեն մասնակցել ռեսուրսների ձեռքբերմանը)՝ առաջնորդվելով նրա ֆիզիկական և հոգեկան վիճակի մասին կեղծ մտահոգությամբ, հայտարարելով իրեն ընտանիքի միակ կերակրողը: Սա իր հերթին նվաստացնում է զուգրնկերոջը, քանի որ շեշտվում է նրա “տեղը” կյանքում և հասարակության մեջ: Արդյունքում նման գործողությունները հանգեցնում են բռնությանը ընտանիքում:

3. Զորակոչային շահագործումը՝ զինվորական ծառայությամբ չնախատեսված և դրա կարիքներից չբխող աշխատանքների իրականացում:

4. Բանտային/դատապարտյալների շահագործումը՝ բանտարկյալի էժան կամ անվճար աշխատանքի օգտագործում՝ եկամուտ ստանալու նպատակով: Այսօր էլ կան երկրներ, որտեղ սա ընդունված և թույլատրելի պրակտիկա է համարվում:

## **ԹԵՄԱ 2. ՄԱՐԴԿԱՆՑ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ (ԹՐԱՖԻՔԻՆԳԸ) ՈՐՊԵՍ ՄԱՐԴՈՒ ՀԻՄՆԱՐԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՏՆԱՀԱՐՈՒՄ: ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՕՐԵՆՄԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ**

1. Մարդկանց շահագործումը (թրաֆիքինգը) և մարդու իրավունքները
2. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի միջազգային օրենսդրությունը
3. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի ազգային օրենսդրությունը
4. Երեխաների շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի օրենսդրության առանձնահատկությունները
5. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի հնարավոր ուղիները

### **1. Մարդկանց շահագործումը (թրաֆիքինգը) և մարդու իրավունքները**

Թրաֆիքինգը մարդու իրավունքների խախտման ժամանակակից ձևերից է, որը հանցագործություն է և անհատի, և պետության դեմ: Թրաֆիքինգը խախտում է մարդու հիմնարար իրավունքների ու ազատությունների գերակշիռ մասը:

Ընդհանրապես, “իրավունք” տերմինն ընկալվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ առումներով: Օբյեկտիվ առումով իրավունքը պետության կողմից սահմանված և պաշտպանվող համապարտադիր, ձևականորեն որոշակի վարքագծի կանոնների համակցություն է, որն արտահայտում է բնակչության ընդհանուր և անհատական շահերը և հանդիսանում է հասարակական հարաբերությունների կարգավորիչ: Սուբյեկտիվ առումով իրավունքը մարդուն տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ որոշելու իր վարքագծի չափը:

Որպեսզի մարդը կարողանա բավարարել իր նյութական, հոգևոր և այլ պահանջները, օգտագործի և զարգացնի մարդկային հատկանիշները, մտավոր կարողությունները, նրան անհրաժեշտ են համապատասխան հնարավորություններ: Դրանք պետության կողմից ձևակերպվում են որպես մարդու իրավունքներ և ազատություններ:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի<sup>3</sup> նախաբանում, նշվում է, որ մարդու իրավունքների ոտնահարումն ու արհամարհումը հանգեցրել են բարբարոսական, մարդկային խիղճը վրդովող գործողությունների, որ մարդկության վեհ նպատակն է հռչակված այնպիսի մի աշխարհի ստեղծումը, որտեղ մարդիկ կունենան խոսքի ու համոզմունքների ազատություն և գերծ կլինեն վախից ու կարիքի: Անհրաժեշտ է, որպեսզի մարդու իրավունքները պաշտպանվեն օրենքի ուժով, որպեսզի մարդը հարկադրված չլինի դիմելու, որպես վերջին միջոցի, բռնության ու ճնշման դեմ ուղղված ապստամբության”:

Մարդու իրավունքները՝

- համընդհանուր են, քանի որ պատկանում են բոլոր մարդկանց,
- չեն շնորհվում պետության կամ որևէ անձի կողմից, ունեն գերակայություն մարդկային համակեցության մյուս բոլոր կանոնների նկատմամբ:
- փոխկապակցված են և փոխլրացնող, քանի որ քաղաքական և քաղաքացիական իրավունքները օգնում են իրականացնել տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ և հակառակը,
- անօտարելի են, քանի որ դրանցով մարդն օժտված է ի ծնե, ուստի ոչ ոք չի կարող նրան զրկել այդ իրավունքներից:

Մարդու իրավունքները բնորոշվում են մի շարք չափանիշներով՝

- բոլոր մարդիկ, առանց որևէ խտրականության, ունեն հիմնական իրավունքներ ու ազատություններ,
- մարդն օժտված է բնական իրավունքներով և ազատություններով՝ անկախ տարածքից, պետական և հասարակական կառուցվածքից, քաղաքական ռեժիմից,
- մարդու իրավունքները պաշտպանվում են ազգային և միջազգային մակարդակով,
- անընդունելի է առաջնություն տալ իրավունքների մի մասին և անտեսել մյուսները<sup>4</sup>:

“Մարդու իրավունքների և մարդկանց թրաֆիքինգի առաջարկվող սկզբունքների և ուղենիշերի” համաձայն, ՄԱԿ-ի մարդու իրավունքների գծով գերագույն հանձնակատարը համարում է, որ թրաֆիքինգի դեմ պայքարի բոլոր միջոցառումների առանցքը պետք է կազմի թրաֆիքինգի ենթարկված անձանց իրավունքների

<sup>3</sup> Ընդունվել է և ուժի մեջ է մտել 1948թ.-ի դեկտեմբերի 10-ին:

<sup>4</sup> Երեմյան Ա., Թումասյան Դ., Գրիգորյան Գ. Հայաստանի Հանրապետությունում թրաֆիքինգի դեմ պայքարի իրավական հիմունքները, Երևան, 2009, էջ 16-17

պաշտպանությունը<sup>5</sup>: Թրաֆիքինգից տուժած անձանց պաշտպանություն և օժանդակություն ցուցաբերելու ճանապարհով հնարավոր է արձագանքել մարդու իրավունքների այն չարաշահումներին, որոնք տեղի են ունեցել անձանց թրաֆիքինգի ենթարկելու պատճառով, միաժամանակ բացառելով տուժողներին, որպես հանցագործների վերաբերվելու միտումները:

Թրաֆիքինգի արդյունքում հիմնականում խախտվում են մարդու արժանապատվության, խտրականությունից զերծ մնալու, կյանքի, ազատության և սեփական անձի անձեռնմխելիության, ստրկությունից, շահագործումից ազատ լինելու, հարկադիր աշխատանքի արգելման, խոշտանգումների և/կամ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու, արդարադատության մատչելիության և արդար դատաքննության, կամայական կալանքի, ձերբակալման կամ արտաքսման չենթարկվելու, տեղաշարժի ազատության և սեփական բնակության վայրն ազատորեն ընտրելու, ապաստանի, ազատ արտահայտվելու, առողջապահական և սոցիալական ծառայություններից օգտվելու, աշխատանքի ազատ ընտրության, կրթության և վերապատրաստման իրավունքները:

Ելնելով վերոգրյալից, անհրաժեշտ է նշել, որ թրաֆիքինգի գոհը զրկվում է բոլոր վերոգրյալ հիմնարար իրավունքներից կամ դրանց մեծ մասից, կամ այդ իրավունքները սահմանափակվում են: Առավել ցայտուն դա երևում է ազատ տեղաշարժվելու, աշխատանքի ազատ ընտրության, խոշտանգումներից զերծ մնալու իրավունքների պարագայում: Ավելին, թրաֆիքինգի գոհը երբեմն գիտակցում և ընդունում է, որ այդ զրկանքները կամ սահմանափակումները անհրաժեշտ են նրա համար: Օրինակ, օտարերկրյա պետությունում գտնվող թրաֆիքինգի գոհին կարող են ներշնչել, որ նրա՝ բնակարանից դուրս չգալը պայմանավորված է իր իսկ անվտանգության ապահովմամբ, քանի որ այդ պետության ոստիկանները նրան կարող են ձերբակալել և ուղարկել միգրացիոն բանտ, կամ կարող են համոզել, որ իր կատարած ծանր աշխատանքը նրա ընտրությունն է, ավելին՝ միակն է, որ համապատասխանում է նրա հմտություններին և ունակություններին: Այստեղ պետք է միշտ հիշել, որ այդ իրավունքները համընդհանուր են և անօտարելի, ուղղակի շահագործողները օգտագործում են գոհի իրազեկվածության և իրավական գիտելիքների պակասը:

Հետևաբար, մարդու հիմնարար իրավունքների իմացությունը հնարավորություն կընձեռի պոտենցիալ գոհերին՝ որոշ չափով պաշտպանել իրենց իրավունքները և զերծ մնալ հնարավոր շահագործման վտանգից:

## **2. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի միջազգային օրենսդրությունը**

---

<sup>5</sup> Վիեննայի ֆորումը մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի թեմայով, 13-15 փետրվար 2008թ., թիվ 007 աշխատանքային հանդիպում: Պաշտպանությունից մինչև հետապնդում. ռազմավարական մոտեցում, էջ 2:

Մարդկանց թրաֆիքինգը համաշխարհային հիմնախնդիր է, որը հատուկ է ազգային սահմանները: Այն համարվում է անդրազգային հանցագործություն, որն իր բնույթով նման է թմրամիջոցների և զենքի միջազգային ապօրինի շրջանառությանը<sup>6</sup>:

Թրաֆիքինգի դեմ պայքարը կարգավորող հիմնական միջազգային իրավական փաստաթղթերից է ՄԱԿ-ի “Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի” 2000 թվականի կոնվենցիան և նրան կից երկու կամընտիր Արձանագրությունները՝ “Ցամաքով, ծովով և օդով միգրանտների անօրինական ներմուծման դեմ” և “Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին”<sup>7</sup>, ինչպես նաև Եվրոպայի Խորհրդի “Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին” 2005 թվականի կոնվենցիան<sup>8</sup>:

ԵՄ կոնվենցիայի համաձայն, մարդկանց թրաֆիքինգ համարվում է շահագործման նպատակով մարդկանց հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ընդունելը՝ ուժի սպառնալիք կամ ուժ գործադրելու կամ հարկադրանքի որևէ այլ ձև կիրառելու, առևանգման, խարդախության, խաբեության, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը չարաշահելու, կամ այլ անձնավորության նկատմամբ որոշակի վերահսկողություն իրականացնող որևէ անձի համաձայնությունը ձեռք բերելու նպատակով դրամական միջոցներ կամ այլ օգուտներ տրամադրելու կամ ստանալու եղանակով: Շահագործումը ներառում է այլ անձանց մարմնավաճառության կամ սեքսուալ այլ շահագործումը, հարկադիր աշխատանքները կամ ծառայությունները, ստրկությունը կամ ստրկությանը հավասարազոր վիճակը, տաժանակիր աշխատանքները կամ օրգանների հեռացումը<sup>9</sup>:

Որոշակի փոփոխություններով սահմանումը ամրագրված է ՀՀ քրեական օրենսդրքի (այսուհետ՝ ՀՀ Քր. օր.) 132-րդ հոդվածի 1-ին մասում:

Շահագործման ձևերի ուսումնասիրման համար կարևոր նշանակություն ունեն ԱՄԿ-ի “Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին” թիվ 29 և “Հարկադիր աշխատանքի վերացման մասին” թիվ 105 կոնվենցիաները<sup>10</sup>: Առաջին կոնվենցիան ընդունվել է հարկադիր կամ պարտադիր աշխատանքի վերացման նպատակով և այն սահմանում է “հարկադիր կամ պարտադիր աշխատանք” հասկացությունը՝ մատնանշելով այն աշխատանքները, որոնք չեն ներառվում դրա մեջ<sup>11</sup>: Այդ կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն, հարկադիր կամ պարտադիր աշխատանք

<sup>6</sup> Խորհրդարանական ֆորում Վիեննայում, 12 փետրվարի 2008 թ., էջ 4

<sup>7</sup> ՀՀ-ում ուժի մեջ է մտել 2003թ.-ի ապրիլի 19-ից:

<sup>8</sup> ՀՀ-ում ուժի մեջ է մտել 2008թ.-ի ապրիլի 19-ից:

<sup>9</sup> Քանի որ տարբեր ակտերում կիրառվում են և “օրգանների վերցնել”, և “օրգանների հեռացնել”, և “օրգանների կորզել” տերմինները, այս իմաստով, դրանք կարող են դիտվել որպես նույնաբովանդակ հասկացություններ:

<sup>10</sup> Այս երկու կոնվենցիաները ՀՀ-ում ուժի մեջ են մտել 2005թ.-ի դեկտեմբերի 17-ից:

<sup>11</sup> Ազգային օրենսդրության մեջ հարկադիր կամ պարտադիր աշխատանքի սահմանումը բացակայում է, և իրավակիրառ պրակտիկայում հղում է կատարվում այս կոնվենցիայի վրա:

նշանակում է որևէ պատժի սպառնալիքի տակ որևէ անձից պահանջվող ցանկացած աշխատանք կամ ծառայություն, որի համար այդ անձը կամավոր չի հայտնել իր համաձայնությունը: Երկրորդ կոնվենցիան ընդունվել է հարկադիր կամ պարտադիր աշխատանքն արգելելու **նպատակով և հիմնվում է ԱՄԿ-ի շրջանակներում կնքված մի շարք միջազգային իրավական փաստաթղթերի, մասնավորապես, “Ստրկության մասին” 1926 թվականի կոնվենցիայի և “Աշխատավարձի պահպանման մասին” 1949 թվականի կոնվենցիայի վրա:**

Ելնելով երեխաների աշխատանքի որոշակի առանձնահատկություններից, ԱՄԿ-ն ընդունել է նաև “Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի արգելման և վերացնելու անհապաղ միջոցառումների մասին” թիվ 182 կոնվենցիան<sup>12</sup>, որը պահանջում է անհապաղ և արդյունավետ միջոցներ ձեռնարկել երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերը վերացնելու և 18 տարեկանից ցածր տղաներին և աղջիկներին հարկադիր աշխատանքներում չներգրավելու համար: Ըստ թիվ 182 կոնվենցիայի, երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերը ներառում են՝

- ստրկության բոլոր ձևերը, թրաֆիքինգը, պարտավորական կապալը, ճորտատիրական կախումը, զինված հակամարտություններում օգտագործելը, հարկադիր աշխատանքը,

- երեխաներին պոռնոգրաֆիայի և մարմնավաճառության մեջ ներգրավելը,

- երեխաներին թմրանյութերի առուծախում և թունավոր աշխատանքներում ներգրավելը,

- ցանկացած աշխատանք, որն իր բնույթով և պայմաններով կարող է վնաս հասցնել երեխայի առողջությանը, անվտանգությանը կամ բարոյականությանը:

Ընդ որում, յուրաքանչյուր անդամ պետություն, հաշվի առնելով կրթության կարևորությունը երեխայի աշխատանքը վերացնելու գործում, պարտավոր է ձեռնարկել արդյունավետ միջոցառումներ, ուղղված՝

ա) երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերում երեխաների ներգրավման կանխմանը,

բ) անհրաժեշտ և համապատասխան ուղղակի աջակցություն ցույց տալուն

գ) այդ աշխատանքներից ազատված բոլոր երեխաներին անվճար բազային կրթության, ինչպես նաև, ըստ հնարավորության և անհրաժեշտության, մասնագիտական պատրաստվածության տրամադրմանը,

դ) առավել խոցելի վիճակում գտնվող երեխաների հայտնաբերմանը և նրանց հետ կապի հաստատմանը, և

ե) աղջիկների վիճակի առանձնահատկությունները հաշվի առնելուն:

Ստրկության հասկացությունը սահմանվում է Ազգերի Լիգայի “Ստրկության մասին” 1926 թվականի կոնվենցիայով<sup>13</sup>, համաձայն որի ստրկությունը՝ այն անձի վիճակն է կամ դրությունը, ում նկատմամբ իրականացվում են սեփականության իրավունքին բնորոշ բոլոր կամ որոշակի լիազորությունները: 1956 թվականին Ժնևում ընդունվել է

<sup>12</sup> ՀՀ-ում ուժի մեջ է մտել 2006թ.-ի հունվարի 2-ից:

<sup>13</sup> Այս Կոնվենցիան Հայաստանի Հանրապետությունը դեռ չի վավերացվել:

ՄԱԿ-ի “Ստրկության, ստրկավաճառության և ստրկությանը հավասարազոր ավանդույթների վերացման մասին” լրացուցիչ կոնվենցիան<sup>14</sup>, որում ներառված են ոչ միայն ստրկության, այլև դրան հավասարազոր և այլ կախյալ վիճակների հասկացությունները: Դրանցից են՝

1. պարտապանի ստրկացումը, այսինքն՝ այնպիսի վիճակ կամ դրություն, երբ պարտապանը, որպես պարտքի ապահովման միջոց գրավ է դնում կամ իր աշխատանքը, կամ իրենից կախյալ վիճակում գտնվող անձի աշխատանքը, եթե կատարվող աշխատանքի արժեքը չի հաշվակցվում տվյալ պարտքի մարմանը, կամ եթե այդ աշխատանքի տևողությունը չի սահմանափակվում և դրա բնույթը չի կոնկրետացվում,

2. ճորտական վիճակը, այսինքն՝ հողի այնպիսի օգտագործումը, որի դեպքում օրենքով, ավանդույթի ուժով կամ փոխադարձ համաձայնության հիման վրա օգտագործողը պարտավոր է ապրել և աշխատել ուրիշին պատկանող հողատարածքի վրա և վարձատրությամբ կամ առանց դրա որոշակի աշխատանք կատարել այդ սեփականատիրոջ օգտին ու չի կարող փոփոխել իր նման վիճակը,

3. ցանկացած ինստիտուտ կամ ավանդույթ, որի ուժով.

ա) կնոջ ծնողները, խնամակալը, ընտանիքը կամ յուրաքանչյուր այլ անձ կամ անձանց խումբ դրամով կամ բնեղենով վարձատրելու դիմաց խոստանում են ամուսնացնել կամ ամուսնացնում են այդ կնոջը, առանց նրան մերժելու իրավունք վերապահելու,

բ) կնոջ ամուսինը, վերջինիս ընտանիքը կամ տոհմը իրավունք ունեն վարձատրությամբ կամ այլ պայմանով փոխանցելու տվյալ կնոջն այլ անձի,

գ) ամուսնու մահից հետո կինը ժառանգաբար փոխանցվում է մեկ այլ անձի,

4. ցանկացած ինստիտուտ կամ ավանդույթ, որի ուժով երեխան (մինչև 18 տարեկան անձը) ծնողների կամ նրանցից մեկի կամ խնամակալի կողմից վարձատրությամբ կամ առանց դրա փոխանցվում է մեկ այլ անձի՝ այդ երեխայի կամ նրա աշխատանքի շահագործման նպատակով<sup>15</sup>:

Վերը նշված միջազգային ակտերը կազմում են թրաֆիքինգի ոլորտը կարգավորող միջազգային հիմնական իրավական բազան:

**3. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի ազգային օրենսդրությունը**  
Թրաֆիքինգի քրեականացման գործընթացը ՀՀ-ում կրել է ինտենսիվ բնույթ: ՀՀ քրեական օրենսդրությունում օգտագործվել են վերը նշված կոնվենցիաներում օգտագործվող տերմինները:

<sup>14</sup> Այս Կոնվենցիան Հայաստանի Հանրապետությունը նույնպես դեռ չի վավերացվել:

<sup>15</sup> ՀՀ Քրեական իրավունք. Հատուկ մաս/ Գ.Ղազինյանի խմբագրությամբ.- Եր.: Երևանի պետական համալսարանի հրատ., 2007, էջ 208-209.

Մինչև ՀՀ Քր. օր.-ի ընդունումը<sup>16</sup> Հայաստանի քրեական օրենսդրությունում սահմանված չի եղել որևէ նորմ, որով նախատեսված լիներ քրեական պատասխանատվություն թրաֆիքինգի համար: 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ Քր. օր.-ում ներառված 132-րդ հոդվածի վերնագիրն էր “Մարդկանց առևտուրը”: Հետագայում, 2004, 2006 և 2009 թվականներին օրենսդրի կողմից ՀՀ քր. օր.-ի 132-րդ հոդվածում չորս անգամ կատարվել են փոփոխություններ և լրացումներ: Ներկայումս ՀՀ քր. օր.-ի 132-րդ հոդվածի վերնագիրն է “Շահագործման նպատակով մարդուն հավաքագրելը, փոխադրելը, հանձնելը, թաքցնելը կամ ստանալը”:

Բացի այդ, “Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին” 2009 թվականի ՀՀ օրենքով<sup>17</sup> իրականացվել է պատիժների խստացում՝ նվազագույն պատժաչափը 3 տարի ազատազրկումից ավելացել է մինչև 5 տարի ազատազրկում, և ավելացվել է լրացուցիչ պատժի՝ գույքի բռնագրավման նշանակման հնարավորությունը<sup>18</sup>:

ՀՀ քրեական օրենսդրությամբ թրաֆիքինգը ավարտված հանցագործություն համարվելու համար պարտադիր չէ, որ անձը ենթարկվի շահագործման: Դրա համար բավարար է, որ անձի նկատմամբ շահագործման նպատակով կատարվի ՀՀ քր. օր.-ում նշված գործողություններից մեկը՝ նշված եղանակներից որևէ մեկի կիրառմամբ: Առանձնացված են այն դեպքերը, երբ հանցագործությունը կատարվում է տասնութ տարին չլրացած անձանց կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա դեկավարելու հնարավորությունից զրկված անձանց նկատմամբ: Այն անձանց թրաֆիքինգը կամ շահագործումը նախատեսված է ՀՀ քր. օր.-ի 132<sup>2</sup> հոդվածով:

Եթե անչափահասների նկատմամբ հատուկ վերաբերմունքը պայմանավորված է ԵԽ-ի 2005 թվականի Կոնվենցիայից, որի համաձայն շահագործման նպատակով երեխային հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ընդունելը համարվում է “մարդկանց թրաֆիքինգ” նույնիսկ այն դեպքում, երբ դա կապված չէ նախատեսված եղանակներից որևէ մեկի կիրառման հետ, ապա հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա դեկավարելու հնարավորությունից զրկված անձանց ՀՀ գործող օրենսդրության մեջ ներառվել են ներպետական նախաձեռնությամբ: Վերը թվարկված երկու խմբերի անձանց նկատմամբ կատարված ոսնձգությունը համարվում է ավարտված՝ գործողությունը (հավաքագրելը,

<sup>16</sup> ՀՀ Քրեական օրենսգրքը ընդունվել է 2003թ. ապրիլի 18-ին, իսկ ուժի մեջ է մտել 2003թ.-ի օգոստոսի 1-ից:

<sup>17</sup> Ուժի մեջ է մտել 2010թ.-ի հունվարի 2-ից:

<sup>18</sup> ՀՀ քրեական օրենսգրքի առաջին խմբագրությամբ մարդկանց առևտուրը պատժվում էր այդ հոդվածի 1-ին մասով՝ տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով, իսկ 3-րդ մասով պատժվում են ազատազրկմամբ՝ յոթից տասը տարի ժամկետով:



փոխադրելը, հանձնելը, թաքցնելը կամ ստանալը ) կատարելու կամ շահագործելու պահից, եթե այն կատարվել է շահագործման նպատակով: Այսինքն, տվյալ դեպքում այդ անձանց նկատմամբ կատարման միջոցներ (եղանակներ) կիրառելը պարտադիր չէ: Այսպիսով, նշված երկու խմբի անձանց համար օրենսդիրը սահմանել է մարդկանց թրաֆիքինգից պաշտպանվածության ավելի բարձր աստիճան:

Առանձնացվում են այն դեպքերը, երբ հանցագործությունը կատարվում է տասնութ տարին չլրացած անձանց կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա դեկլարելու հնարավորությունից զրկված անձանց նկատմամբ: Եթե անչափահասների նկատմամբ հատուկ վերաբերմունքը պայմանավորված է ԵԽ-ի 2005 թվականի Կոնվենցիայիայով, որի համաձայն շահագործման նպատակով երեխային հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ընդունելը համարվում է “մարդկանց թրաֆիքինգ” նույնիսկ այն դեպքում, երբ դա կապված չէ նախատեսված եղանակներից որևէ մեկի կիրառման հետ, ապա հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթը գիտակցելու հնարավորությունից զրկված անձինք ՀՀ գործող օրենսդրության մեջ ներառվել են ներպետական նախաձեռնությամբ: Վերը թվարկված երկու խմբերի անձանց նկատմամբ կատարված ոստնձգությունը համարվում է ավարտված՝ գործողությունը (հավաքագրելը, փոխադրելը, հանձնելը, թաքցնելը կամ ստանալը) կատարելու պահից, եթե այն կատարվել է շահագործման նպատակով: Այսինքն, տվյալ դեպքում այդ խմբի անձանց նկատմամբ կատարման միջոցներ (եղանակներ) կիրառելը պարտադիր չէ: Այսպիսով, նշված երկու խմբի անձանց համար օրենսդիրը սահմանել է մարդկանց թրաֆիքինգից պաշտպանվածության ավելի բարձր աստիճան:

**Հավաքագրելը** տուժողի կողմից աշխատանք կատարելու կամ ծառայություն մատուցելու կամավոր համաձայնությունը ստանալուն ուղղված գործողություն կամ գործունեություն է, որի նպատակն է տուժողի շահագործումը<sup>19</sup>: Հավաքագրումը կարող է կատարվել օրինական կամ ապօրինի եղանակներով: Հավաքագրման սխեմաները զանազան են: Հավաքագրման առավել տարածված մեթոդներն են՝

- որակավորում չպահանջող և աշխատողի կարծիքով պատշաճ վարձատրվող աշխատանքի առաջարկ (մատուցող, պարուհի, շինարար, դայակ և այլն),
- “ամուսնական գործակալությունների” միջոցով ապագան կերտելու հնարավորություն,

---

<sup>19</sup> Արդի հայերենի բացատրական բառարանում “Հավաքագրել” բառը բացատրվում է այսպես “1. շատերին վարձել՝ վարձով հավաքել մի բանի համար: 2. փխբ. կողմնակիցներ գտնել, գրավել, ներգրավել: 3. փխբ. համալրել, կազմը ուժեղացնել”: Տե՛ս Է.Բ.Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, “Հայաստան”, 1977, հատոր 1, էջ 837: ՀՀ Քրեական օրենսգրքի 132 հոդվածի 5-րդ մասի համաձայն “5. Սույն հոդվածում մարդու շահագործում են համարվում այլ անձի պոռնկության մեջ ներգրավելը կամ սեռական շահագործման այլ ձևերը, ... “: Նույն բառարանում “Ներգրավել” բառը բացատրվում է որպես “1. Իր շարքերի կազմի մեջ առնել, ներառել, ընդգրկել: 2. մասնակից դարձնել: 3. ներքաշել, ակամայից կամ հարկադրաբար մի բանի մեջ գրավել”: Տե՛ս Է.Բ.Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, “Հայաստան”, 1977, հատոր 2, էջ 1063:

• այլ եղանակով անձին ներգրավելու համար խաբելը, վստահությունը չարաշահելը, մոլորեցնելը և այլն:

**Փոխադրելը (տեղափոխելը)** գործողություն է, որը ենթադրում է տուժողին մեկ վայրից այլ վայր տեղափոխելը երկրի ներսում կամ երկրից դուրս, և/կամ աջակցությունը սահմանը օրինական կամ անօրինական հատելու հարցում, ինչպես նաև տարանցիկ կամ նշանակակետ երկրում կացության կազմակերպումը: Տեղափոխման հեռավորությունը կամ սահմանները նշանակություն չունեն: Տուժողին կարող են տեղափոխել տրանսպորտային միջոցներով, ոտքով, բացահայտ և քողարկված:

**Հանձնելը** զոհի փոխանցումն է ընդունողին կամ միջնորդին կամ այլ անձանց՝ նրան վաճառելուց կամ այլ եղանակով օտարելուց հետո (նվիրատվություն, պարտքի մարում, վնասի փոխհատուցում և այլն):

**Ստանալը** գործողություն է, որը ենթադրում է փոխանցման, նվիրատվության, փոխանակության, փոխառության կամ այլ գործարքի արդյունքում թրաֆիքինգի զոհի ձեռք բերում: Ստանալը կարող է լինել հատուցելի կամ անհատույց, որոշակի ժամկետով կամ անժամկետ, որոշակի պայմաններով կամ առանց դրանց:

**Թաքցնելը** գործողություն է, որն ուղղված է թրաֆիքինգի զոհին հանրությունից առանձնացված պահելուն: Այն կարող է արտահայտվել բնակելի տարածք, կացարան կամ այլ վայր հատկացնելով (օրինակ, զոհին պահեստային տարածքում պահելը):

Թրաֆիքինգը կատարելու միջոցներն են (եղանակներն են)՝

- կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելը կամ դրա գործադրման սպառնալիքը կամ հարկադրանքի այլ ձևերը,
- առևանգումը,
- խաբելությունը կամ վստահությունը չարաշահելը,
- վիճակի խոցելիությունը օգտագործելը,
- նրան վերահսկող անձի համաձայնությունը ստանալու համար՝ վճարումներ կամ բարիքներ տալը կամ ստանալը:

Կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն է համարվում ծեծը, թեթև մարմնական վնասվածք պատճառելը, դրանց սպառնալիքը, սննդից և ջրից զրկելը, անմարդկային պայմաններում պահելը և այլն:

Առևանգումը իրականացվում է խաբելության, վստահությունը չարաշահելու, բռնության կամ բռնություն գործադրելու սպառնալիքի միջոցով մարդուն գաղտնի կամ բացահայտ առևանգելու ձևով:

Խաբելությունը՝ դիտավորությամբ իրականությունը խեղաթյուրելն է:

Վստահության չարաշահումը դրսևորվում է վարքագծով, երբ հանցավորը մոլորության մեջ է գցում անձին կամ նրա մերձավորներին (ծնողներ, ամուսին և այլն) իր իրական մտադրությունների կապակցությամբ, վստահություն է առաջացնում նրանց մեջ իր ապագա վարքագծի կապակցությամբ և զոհն “իր կամքով” համաձայնվում է համապատասխան աշխատանք կամ ծառայություն մատուցել կամ մեկնել հանցագործի հետ:

Վիճակի խոցելիությունը օգտագործել նշանակում է որևէ իրավիճակի չարաշահում, երբ անձը բացի ենթարկվելուց չունի իրական կամ ընդունելի այլընտրանք:

Տուժողին վերահսկող է համարվում այն անձը, ով որոշակի հարաբերությունների ուժով պարտավոր է հսկողություն իրականացնել նրա նկատմամբ:

**Հարկադիր աշխատանք.** ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածի համաձայն, յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ընտրության ազատություն, իսկ հարկադիր աշխատանքն արգելվում է: Համաձայն ՀՀ Աշխատանքային օրենսգրքի, աշխատանքային օրենսդրության սկզբունքներից են՝ աշխատանքի ազատությունը<sup>20</sup> և ցանկացած ձևի հարկադիր աշխատանքի և աշխատողների նկատմամբ բռնությունների արգելումը: Դա նշանակում է, որ աշխատանքը պետք է լինի միայն կամային, և աշխատողները ազատ են աշխատանքի ընտրության մեջ:

**Սեռական շահագործում.** Սեռական շահագործումն արժանանում է ավելի մեծ ուշադրության ելնելով այն հանգամանքից, որ մարմնավաճառությունը ինքնին դիտվում է որպես հակաբարոյական երևույթ, իսկ հարկադիր աշխատանքը ընդամենը դիտվում է որպես ապօրինի աշխատանք<sup>21</sup>: Սեռական շահագործումը իրականացվում է մարմնավաճառության և սեռական այլ շահագործման ձևով: Մարմնավաճառությունը վճարի դիմաց պատահական, արտամուսնական սեռական այնպիսի հարաբերությունների մեջ մտնելն է, որոնք հիմնված չեն անձնական համակրանքի, զուգընկերոջ հանդեպ սեռական հակումների վրա: Դրա բնութագրական գծերն են՝ տարբեր զուգընկերների (հաճախորդների) հետ սեռական հարաբերությունների պարբերականությունը և վճարման վերաբերյալ նախնական համաձայնությունը (թեև վճարի չափը նախապես կարող է չքննարկվել)<sup>22</sup>: Մարմնավաճառության շահագործումը նշանակում է, որ մարմնավաճառին սեռական հարաբերություններ ունենալուն հարկադրելով կամ պարտադրելով՝ երրորդ անձինք որոշակի շահ են ստանում: Ընդ որում, շահը կարող է լինել նաև ոչ նյութական: Օրինակ, երբ մարմնավաճառին մատուցում են “որպես նվեր” կամ նա տրամադրվում է անհատույց “ժամանակավոր օգտագործման”: Շահագործումը առկա է նաև այն դեպքում, երբ կնոջ մատուցած սեռական ծառայության համար գումարը չեն վճարում կամ վճարում են գումարի մի մասը:

Սեռական այլ շահագործումը նշանակում է, որ շահ ստանալու նպատակով տուժողին ստիպում են սեռական բնույթի, բայց մարմնավաճառություն չհանդիսացող այլ գործողություններ կատարել: Օրինակ, զբաղվել մերկապարով, նկարահանվելով էրոտիկ ամսագրերում կամ ֆիլմերում և այլն<sup>23</sup>:

<sup>20</sup> Այստեղ առկա է որոշակի տերմինաբանական անհամապատասխանելիություն ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածի և ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 3-րդ հոդվածի միջև:

<sup>21</sup> Anti-Trafficking Training for Frontline Law Enforcement officers, Vienna, 2006, p.23

<sup>22</sup> Проституция и преступность. М., 1991, էջ 100

<sup>23</sup> ՀՀ Քրեական իրավունք. Հատուկ մաս/ Գ.Ղազինյանի խմբագրությամբ.- Երևան.: Երևանի պետական համալսարանի հրատ., 2004, էջ 196

**Ստրկություն.** մեկնաբանությունը տես նախորդ պարագրաֆում: ՀՀ-ում ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակների առկայության մասին նյութ պաշտոնապես չի հրապարակվել:

**Մարմնի մասեր կամ հյուսվածքներ վերցնելը (օրգաններ կամ մարմնի մասեր կորզելը).** Համաձայն ՀՀ “Մարդու օրգանների և (կամ) հյուսվածքների փոխպատվաստման մասին” օրենքի, փոխպատվաստումը կարող է կատարվել միայն այն դեպքում, երբ մյուս բժշկական միջոցառումները չեն կարող երաշխավորել հիվանդի կյանքի փրկությունը և (կամ) առողջության վերականգնումը: Կենդանի դոնորից փոխպատվաստման նպատակով կարող են վերցվել միայն զույգ օրգաններից մեկը, կենտ օրգանի մի մասը կամ հյուսվածքը, որոնց բացակայությունը չի կարող առաջացնել դոնորի կյանքի համար վտանգ ներկայացնող փոփոխություններ: Հակառակ դեպքում դոնորի առողջությանը պատճառվում է վնաս կամ անձը սպանվում է: Այս առումով հաճախ խոսքը գնում է երիկամների փոխպատվաստման մասին: Հարկ է նշել, որ օրգանների և հյուսվածքների կորզմամբ շահագործումը չի սահմանափակվում փոխպատվաստմամբ, կորզված օրգանները և հյուսվածքները կարող են օգտագործվել նաև բժշկական փորձերի, հանիքալիզմի, կրոնական ծիսակատարությունների համար և այլ նպատակներով:

Բացի վերը նշված իրավական ակտերից, ՀՀ Կառավարությունը հաստատել է մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագրեր 2004-2006թթ., 2007-2009թթ., 2010-2012թթ., իսկ 2008 թվականին ՀՀ Կառավարության որոշմամբ հաստատեց Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգը, որի նպատակն է մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերի պաշտպանության և աջակցության կազմակերպումը: Կարգով հաստատվել են պետական լիազորված մարմինները, դրանց գործառույթները թրաֆիքինգի զոհի հայտնաբերման դեպքում, զոհի և կատարված հանցագործության վերաբերյալ տեղեկատվության փոխանակման, ինչպես նաև զոհի նույնացման հետ կապված ընթացակարգերը:

Կարգում նշված են բոլոր շահագրգիռ կողմերը, որոնք մասնակցում են կամ կարող են մասնակցել թրաֆիքինգի ենթարկված անձանց ուղղորդմանը: Կարգով նախատեսվում է, որ բոլոր պետական և հասարակական մարմինները զոհերի հետ աշխատելիս ստացվող տեղեկություններն ըստ բնույթի պետք է տարանջատեն երկու խմբի՝ հայտնաբերված զոհի մասին տեղեկության և հանցագործության մասին տեղեկության: Հայտնաբերված զոհի մասին տեղեկությունը պետք է տրամադրվի ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, քանի որ այդ մարմինը սույն կարգով սահմանվել է որպես զոհերի աջակցության և աջակցության համակարգման համար պետական կառավարման լիազորված մարմին, իսկ հանցագործության մասին տեղեկությունը պետք է տրամադրվի ՀՀ ոստիկանությանը, որը կարգով սահմանվել է որպես թրաֆիքինգի հանցագործության դեմ պայքարի պետական կառավարման հիմնական լիազորված մարմին:

Աջակցության ծավալների համարժեք և նպատակային տրամադրման համար Կարգը սահմանում է նաև զոհի նույնացման և աջակցության տրամադրման երեք հիմնական փուլերը՝ նախնական, միջանկյալ և վերջնական:

#### **4. Երեխաների շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի օրենսդրության առանձնահատկությունները**

Երեխա ասելով ընդունված է հասկանալ 18 տարեկան չդարձած յուրաքանչյուր ոք: Այս սկզբունքը առկա է և ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային ակտերում, ստորագրված պայմանագրերում և ՀՀ գործող օրենսդրության մեջ<sup>24</sup>:

Երեխաների թրաֆիքինգ կամ մանկավաճառություն ասելով հասկացվում է մինչև 18 տարեկան աղջիկների և տղաների վաճառքը: Դրան է նվիրված ”Երեխայի իրավունքների մասին” ՄԱԿ-ի կոնվենցիայի՝ “Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին” կամընտիր արձանագրությունը:

Երեխաների իրավունքների ընդհանուր պաշտպանիչ նորմեր նախատեսված են ինչպես միջազգային, այնպես էլ ազգային իրավական ակտերում: Դրանցից առավել կարևորվում են՝

- “Երեխայի իրավունքների մասին” 1989 թվականի ՄԱԿ-ի Կոնվենցիան<sup>25</sup>,

- “Երեխաների իրավունքների մասին” ՄԱԿ-ի կոնվենցիայի՝ “Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին” կամընտիր արձանագրությունը <sup>26</sup>,

- “Երեխաների իրավունքների մասին” ՄԱԿ-ի կոնվենցիայի՝ “Զինված հակամարտություններին վերաբերող” կամընտիր արձանագրությունը <sup>27</sup>,

- ՄԱԿ-ի “Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի” 2000 թվականի կոնվենցիան և դրան կից երկու կամընտիր Արձանագրությունները՝ “Ցամաքով, ծովով և օդով միգրանտների անօրինական ներմուծման դեմ” թիվ 1 Արձանագրությունը և “Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին” թիվ 2 Արձանագրությունը<sup>28</sup>,

- “Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին” ԵԽ կոնվենցիան<sup>29</sup>,

<sup>24</sup> Երեխայի իրավունքների մասին 1989թ.-ի կոնվենցիայի 1-ին հոդվածը, Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին 2005թ.-ի ԵԽ-ի կոնվենցիայի 4-րդ հոդվածի “դ” կետը, ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի կոնվենցիան լրացնող՝ 2000թ.-ի Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման և խափանման և դրա համար պատժի մասին արձանագրության 3-րդ հոդվածի “դ” կետը, Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին 1999թ.-ի կոնվենցիայի 2-րդ հոդվածը, Ընտանեկան օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասը, “Երեխայի իրավունքների մասին” 1996թ.-ի մայիսի 29-ի ՀՀ օրենքի 1-ին հոդվածը և այլն:

<sup>25</sup> ՀՀ-ում ուժի մեջ է 1990թ.-ի սեպտեմբերի 2-ից:

<sup>26</sup> ՀՀ-ում ուժի մեջ է 2005թ.-ի հուլիսի 30-ից:

<sup>27</sup> ՀՀ-ում ուժի մեջ է 2005թ.-ի մարտի 21-ից:

<sup>28</sup> ՀՀ-ում ուժի մեջ է 2003թ.-ի մարտի 25-ից:

<sup>29</sup> ՀՀ-ում ուժի մեջ է 2008թ.-ի մարտի 20-ից:

• “Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին” կոնվենցիան (Հաագայի կոնցենցիան)<sup>30</sup>,

• ԱՄԿ-ի “Երեխաների աշխատանքի վատթարագույն ձևերի մասին” թիվ 182 կոնվենցիան <sup>31</sup>,

• ԱՄԿ-ի “Հարկադիր աշխատանքի վերացման մասին” թիվ 105 կոնվենցիան<sup>32</sup>,

• ԱՄԿ-ի “Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին” թիվ 29 կոնվենցիան<sup>33</sup>,

• ՀՀ ընտանեկան օրենսգիրքը <sup>34</sup>,

• “Երեխաների իրավունքների մասին” ՀՀ օրենքը <sup>35</sup> և այլ ակտեր:

• “Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին” ՀՀ օրենքը

Երեխաները վաճառվում են սեռական շահագործման նպատակով, ներգրավվում են մուրացկանության, գյուղատնտեսական ու շինարարական աշխատանքների կատարման, մանկական պոռնկագրության և մարմնավաճառության մեջ: Երեխաները մասնակցում են զինված հակամարտություններում, նրանց օգտագործում են թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառությամբ զբաղվող հանցավոր խմբերում, տանը կամ տնամերձ տարածքներում աշխատելու և այլ նպատակներով <sup>36</sup>:

ՄԱԿ-ի մարդու իրավունքների գծով գերագույն հանձնակատարի “Մարդու իրավունքների և մարդկանց թրաֆիքինգի առաջարկվող սկզբունքները և ուղենիշերը” փաստաթղթի 8-րդ ուղենիշը վերաբերում է թրաֆիքինգից տուժած երեխաների պաշտպանության և օժանդակության հատուկ միջոցառումներին: Նրանում ասվում է, որ թրաֆիքինգի ենթարկված երեխաների կրած ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական վնասի առանձնահատկությունների, ինչպես նաև շահագործման նկատմամբ նրանց՝ մեծահասակներից ավելի շատ խոցելի լինելու պատճառով անհրաժեշտ է օրենքների, քաղաքականության, ծրագրերի և միջոցառումների շրջանակում նրանց տարբերակել թրաֆիքինգի ենթարկված մեծահասակներից: Առաջին հերթին պետք է հաշվի առնել երեխաների շահերը: Նրանք պետք է համապատասխան աջակցություն և պաշտպանություն ստանան՝ ելնելով նրանց իրավունքների և կարիքների առանձնահատկություններից:

Երեխաների իրավունքների մասին կոնվենցիան անդրադառնում է երեխաների սեռական շահագործմանը: Կոնվենցիայի համաձայն, մասնակից պետությունները պարտավորվում են երեխային պաշտպանել սեռական շահագործման բոլոր ձևերից և

<sup>30</sup> ՀՀ-ում ուժի մեջ է 2007թ.-ի հունիսի 1-ից:

<sup>31</sup> ՀՀ-ում ուժի մեջ է 2006թ.-ի հունվարի 2-ից:

<sup>32</sup> ՀՀ-ում ուժի մեջ է 2005թ.-ի դեկտեմբերի 17-ից:

<sup>33</sup> ՀՀ-ում ուժի մեջ է 2005թ.-ի դեկտեմբերի 17-ից:

<sup>34</sup> Ուժի մեջ է 2005թ.-ի ապրիլի 19-ից:

<sup>35</sup> Ուժի մեջ է 1996թ.-ի հուլիսի 27-ից:

<sup>36</sup> Европейская сеть против торговли людьми. Доклад по вопросам торговли людьми. Болгария, Дания, Италия, Румыния, Испания, Великобритания, Спасем детей (Save the Children), Италия, 2004, С.23.

սեռական այլասերումից: Այդ նպատակով պետությունները ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները, մասնավորապես, ազգային, երկկողմ և բազմակողմ մակարդակներով, որպեսզի կանխարգելեն՝

- երեխային ցանկացած ապօրինի սեռական գործունեության դրդելը կամ հարկադրելը,

- շահագործման նպատակով երեխաներին պոռնկության մեջ կամ այլ ապօրինի սեռական պրակտիկայում օգտագործելը,

- շահագործման նպատակով երեխաներին պոռնոգրաֆիայի և պոռնոգրաֆիկ նյութերի մեջ օգտագործելը:

Երեխաների շահագործումից և բռնությունից պաշտպանված լինելու իրավունքը, բացի վերը նշված կոնվենցիայից, նախատեսված է նաև “Երեխաների իրավունքների մասին” ՀՀ օրենքով, որի համաձայն, յուրաքանչյուր երեխա ունի ամեն տեսակի (ֆիզիկական, հոգեկան և այլ) բռնությունից պաշտպանության իրավունք: Այդ իրավունքների և օրինական շահերի ոտնահարման դեպքում խախտողը պատասխանատվություն է կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ներառյալ նաև քրեական պատասխանատվությունը:

Երեխաների իրավունքների պաշտպանությանը վերաբերող կարևոր փաստաթղթերից մեկն է ՀՀ Ընտանեկան օրենսգիրքը, համաձայն որի, երեխան ունի բազմաթիվ իրավունքներ, բայց այս ենթատեքստում կարևորվում է Օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասում նշված նորմը, համաձայն որի, երեխան ունի իր ծնողներից դաստիարակություն ստանալու, իր շահերի ապահովության, համակողմանի զարգացման, իր մարդկային արժանապատվությունը հարգելու, ինչպես նաև ֆիզիկական, մտավոր, հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու իրավունք: Մեկ այլ դրույթով երեխան նաև ունի իր ծնողների (օրինական ներկայացուցիչների) չարաշահումներից պաշտպանվելու իրավունք (այս նորմը առավել կարևորվում է, քանի որ պրակտիկայում առկա են դեպքեր, երբ շահագործումը իրականացվում է ծնողի կամ օրինական ներկայացուցչի կողմից):

Հարկ է նշել, որ ՀՀ Կառավարությունը 2003 թվականի N1745-Ն որոշմամբ հաստատել է Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015 թվականների ազգային ծրագիրը, որը համապարփակ փաստաթուղթ է և անդրադարձնում է երեխաների հանդեպ իրականացվող քաղաքականությանը տարբեր բնագավառներում: Այդ փաստաթղթում մատնանշված որոշակի թերությունները և բացթողումները արդեն գտել են իրենց օրենսդրական հանգուցալուծումը՝ համապատասխան փոփոխություններ են կատարվել գործող օրենսդրության մեջ, ընդունվել են նոր օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր: Մասնավորապես, հստակեցվել են երեխաների տեղափոխման, այդ թվում՝ արտասահման, հետ կապված իրավական նորմերը, ապահովվել են աշխատող անչափահասների համար համապատասխան երաշխիքներ, ուժեղացվել է երեխաների և դեռահասների գույքային և անձնական ոչ գույքային իրավունքների

պաշտպանությունը և այլն: Ծրագրի 35-րդ կետում նշված է, որ Հայաստանում ներկայումս առկա չէ երեխաների սեռական շահագործման և առք ու վաճառքի երևույթի հետ կապված հիմնախնդիրը: Եվ իրոք, 2003 թվականի դրությամբ այդպիսի պաշտոնական վիճակագրական տվյալները բացակայում էին, քանի որ թրաֆիքինգը նոր էր քրեականացվել: Բայց այժմ այդ երևույթի մասին տեղեկատվությունը առկա է, ինչի մասին վկայում են հարուցված քրեական գործերը:

“Երեխաների իրավունքների մասին” ՄԱԿ-ի կոնվենցիայի՝ “Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին” կամընտիր արձանագրությունը առանձնակի ուշադրություն է դարձնում երեխաների դատավարական պաշտպանությանը: Այդ հոդվածի համաձայն, մասնակից պետությունները պարտավորվում են զոհ դարձած երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության համար քրեական դատավարության բոլոր փուլերում պատշաճ միջոցներ ձեռնարկել, մասնավորապես, հետևյալ ճանապարհով՝

ա) ընթացակարգերի հարմարեցում զոհ երեխաների խոցելիության ճանաչման և նրանց բացառիկ կարիքների ճանաչման համար, այդ թվում՝ որպես վկա նրանց առանձնահատուկ պահանջների,

բ) տեղեկատվության տրամադրում՝ զոհ երեխաներին իրենց իրավունքների, իրենց դերի մասին, դատավարության ժամկետների և ընթացքի մասին և իրենց գործերով որոշում կայացնելու մասին տեղեկացում,

գ) ազգային օրենսդրության դատավարական նորմերի ապահովում՝ այն դեպքերում, երբ դատավարության ընթացքում շոշափվում են զոհ երեխաների անձնական շահերը, ներկայացվեն և քննարկվեն նրանց կարծիքները, պահանջները և հիմնահարցերը,

դ) ծառայությունների տրամադրում՝ դատավարության բոլոր փուլերում պատշաճ օժանդակություն զոհ երեխաներին,

ե) անհրաժեշտության դեպքում միջոցների ձեռնարկում՝ զոհ երեխաների անձնական կյանքի մասին տեղեկությունների տարածման կանխման նպատակով,

զ) անհրաժեշտ դեպքերում զոհ երեխաների, նրանց ընտանիքների անդամների և նրանց անունից հանդես եկող վկաների պաշտպանության ապահովում՝ ահաբեկչությունից, ներգործության միջոցների կիրառումից,

է) զոհ երեխաներին փոխհատուցում տրամադրելու մասին գործերով որոշումներ կայացնելն և կարգադրությունների ու վճիռների կատարումը չուշացնելը:

Թեև միջազգային և ազգային օրենսդրությունը համահունչ են, բայց երբեմն անհրաժեշտություն է առաջանում այդ ակտերը կիրառել համատեղ: Հարկ է նշել, որ դատական պրակտիկայում արդեն կիրառվել է միջազգային օրենսդրությունը, այն մասով, որով նա լրացնում է ազգային օրենսդրության բացը: Այսպես, ՀՀ Քր. օր.-ի 132<sup>1</sup> հոդվածով հարուցված գործով ընդհանուր իրավասության դատարանում կայացվեց մեղադրական դատավճիռ, որի պատճառական մասում, որպես հիմնավորում բերված



է նաև «Երեխաների աշխատանքի վատթարագույն ձևերի վերացման մասին» ԱՄԿ-ի թիվ 182 կոնվենցիան:

**5. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի հնարավոր ուղիները**

Թրաֆիքինգի դեմ պայքարը տնտեսական, քաղաքական, իրավական, հոգեբանական, կազմակերպչական ու տեխնիկական բնույթի միջոցների համակցություն է՝ ուղղված թրաֆիքինգի կատարմանը նպաստող հանգամանքների վերացմանը (թուլացմանը), թրաֆիքինգի կանխմանը, կանխարգելմանը, բացահայտմանը ու հետաքննմանը, արդարադատության իրականացմանը, թրաֆիքինգի համար դատապարտված անձանց ուղղմանը, պատիժը կրելուց հետո նրանց վարքագծի նկատմամբ վերահսկողության իրականացմանը, ինչպես նաև թրաֆիքինգի բացասական հետևանքների փոխհատուցմանը:

Թրաֆիքինգի դեմ պայքարում, ինչպես ցանկացած հանցագործության դեմ պայքարում ընդհանրապես, կարևորվում են հետևյալ սկզբունքները՝

- թրաֆիքինգի ընդհանուր կանխարգելում, այլ ոչ միայն կոնկրետ դեպքի արձանագրում,
- թրաֆիքինգի կազմակերպման անշահավետության վիճակի ստեղծում,
- մեղավոր անձանց հայտնաբերում և քրեական պատասխանատվության ենթարկում,
- անձնական պատասխանատվության սկզբունք և այլն:

Քանի որ թրաֆիքինգը այնպիսի հանցագործություն է, որը կապված է և կազմակերպված հանցավորության, և բռնի-շահադիտական հանցավորության հետ, ուստի, մեր կարծիքով, դրա դեմ պայքարը կարելի է ներկայացնել որպես այդ հանցագործությունների դեմ պայքարի հանրագումար:

Թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցները համակարգված ձևով կարելի է ներկայացնել հետևյալ կերպ՝

<b>Պայքարի տնտեսական միջոցներ</b>	
<i><b>ընդհանուր</b></i>	<i><b>հատուկ</b></i>
տնտեսական ճգնաժամի հաղթահարում, սղաճի մակարդակի նվազեցում	պետական ոչ բյուջետային հիմնադրամների ստեղծում, որոնց նպատակը թրաֆիքինգի գոհերին պատճառված վնասի փոխհատուցումն է
իրական գործազրկության մակարդակի իջեցում	
<b>Պայքարի քաղաքական միջոցներ</b>	
<i><b>ընդհանուր</b></i>	<i><b>հատուկ</b></i>
պետական և մասնավոր շահերի պաշտպանության հավասար աջակցումը	թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների, նպատակների և խնդիրների ներառում քաղաքական ուժերի և կուսակցությունների ծրագրերում

կաշառակերության վերացում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում,	
բազմազավակ ընտանիքներին և միայնակ մայրերին սոցիալական աջակցության ցուցաբերում, նրանց ֆինանսական օգնության տրամադրում և համապատասխան պետական ծրագրերի մշակում	
անբարենպաստ պայմաններում հայտնված անչափահասներին պետական աջակցության ծրագրի մշակում ու իրագործում	
<b>Պայքարի իրավական միջոցներ</b>	
<b><i>ընդհանուր</i></b>	<b><i>հատուկ</i></b>
տերմինաբանական անհամապատասխանելիության վերացում ինչպես միջազգային և ազգային օրենսդրության մակարդակով, այնպես էլ ազգային օրենսդրության տարբեր ճյուղերի մակարդակով՝ սահմանադրական, քրեական, աշխատանքային, քաղաքացիական	ՀՀ քր. օր.-ում համապատասխան լրացումների և փոփոխությունների կատարում. օրինակ, ՀՀ քր. օր.-ի 132-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի սանկցիաների տարբերակում՝ խստացնելով 3-րդ մասում նախատեսված արարքների համար պատասխանատվությունը
արտագնա աշխատանքների մեկնող անձանց իրավական կարգավիճակի հաստատում ու դրա օրենսդրական բազայի ստեղծում	իրավապահ մարմինների ու թրաֆիքինգի դեմ պայքարով զբաղվող այլ ստորաբաժանումների գործունեության իրավական կարգավորման կատարելագործումը
ՀՀ-ում փողերի լվացման դեմ պայքարին առնչվող դատական պրակտիկայի հստակ մշակում	
<b>Պայքարի հոգեբանական միջոցներ</b>	
<b><i>ընդհանուր</i></b>	<b><i>հատուկ</i></b>
ազգաբնակչության մոտ վտահույան ձևավորում պետական, մասնավորապես իրավապահ մարմինների, ու այլ կազմակերպությունների նկատմամբ	թրաֆիքինգի մասին ազգաբնակչության իրազեկում
անչափահասների վրա հանցավոր երևույթների ազդեցության նվազեցում և այդ ազդեցության տարածման կանխում	
ամենօրյա դաստիարակչական աշխատանքների իրականացում ինչպես դատապարտված անձանց, այնպես էլ խոցելի	

<p>խմբերի և հավանական հանցագործների հետ իրավապահ և պատիժ իրականացնող մարմինների և հասարակության, հասարակական կազմակերպությունների ու եկեղեցու ներկայացուցիչների կողմից</p>	
<b>Պայքարի կազմակերպչական միջոցներ</b>	
<b><i>ընդհանուր</i></b>	<b><i>հատուկ</i></b>
<p>օպերատիվ տվյալների հավաքման և կիրառման մեթոդների կատարելագործում</p>	<p>ՀՀ և արտերկրի իրավապահ մարմինների համագործակցություն թրաֆիքինգի դեմ պայքարում</p>
<p>թրաֆիքինգի համար պատասխանատվություն նախատեսող օրենսդրության քրեագիտական փորձաքննություն</p>	<p>թրաֆիքինգով կամ կասկածելի գործունեությամբ զբաղվող խմբերում "գործակալների" ներգրավում</p>
<p>հանցավոր երևույթների ուսումնասիրությունը ոչ թե մեկուսացված, այլ նաև այլ երևույթների հետ փոխկապակցված պայմաններում,</p>	<p>կանխարգելիչ միջոցառումների ժամանակին իրականացում հավանական զոհերի հայտնաբերման և նրանց հետ բացատրական աշխատանքներ տանելու նպատակով,</p>
<p>մարմնավաճառությամբ զբաղվող կանանց հաշվառման կարգի հստակեցում և կատարելագործում</p>	<p>հավանական շահագործման վայրերի պարբերական ստուգումներ ինչպես իրավապահ մարմինների, այնպես էլ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների և հասարակական կազմակերպությունների կողմից</p>
<p>հստակ և անկողմնակալ պայքարի իրականացում այնպիսի երևույթների դեմ, որոնք հեշտացնում են թրաֆիքինգի իրականացումը (փաստաթղթերի կեղծում, ոչնչացում, օգտագործում, կեղծ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը և այլն),</p>	<p>նախկինում թրաֆիքինգի համար դատապարտված անձանց պատժի կրումից հետո հսկողության և վերահսկողության իրականացում</p>
<p>ԶԼՄ-ների միջոցով հակազդումը անբարոյականությանը, դաժանությանը և բռնությանը</p>	<p>պատիժը կրելու ընթացքում թրաֆիքինգի և դրա հետ կապված այլ հանցագործությունների համար դատապարտված անձանց հետ հատուկ դաստիարակչական աշխատանքների իրականացում</p>
	<p>արտագնա աշխատանքների մեկնող անձանց մոտ համապատասխան փաստաթղթերի առկայության ստուգում՝ աշխատանքների</p>

	տանքային պայմանագիր, պետությունից դուրս գալու իրավունք, այլ պետությունում աշխատելու իրավունք, բժշկական ապահովագրության առկայության փաստաթուղթ և այլն (այդ ստուգման նպատակով ստեղծել համապատասխան մարմին աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կազմի մեջ կամ այդ պարտականությունները դնել ոստիկանության, սահմանապահ կամ այլ մարմնի ստորաբաժանումների վրա)
<b>Պայքարի տեխնիկական միջոցներ</b>	
<i><b>ընդհանուր</b></i>	<i><b>հատուկ</b></i>
տեխնիկական նորամուծությունների ներգրավում իրավապահ մարմինների աշխատանքում	տեղեկատվական որոնողական համակարգերի զանգվածային ներդրում և առկա համակարգերի կատարելագործում
իրավապահ մարմինների նյութատեխնիկական և ֆինանսական պատշաճ ապահովում	աշխատանքի տեսչության կողմից բացատրական աշխատանքների իրականացում ազգաբնակչության բոլոր շերտերում և խմբերում դասախոսությունների, պրակտիկ պարապմունքների, սեմինարների, խաղերի ձևով
իրավապահ մարմինների աշխատակիցների տեխնիկական և դատաիրավական պատրաստվածության մակարդակի բարձրացում	

Ինչպես արդեն նշվել է, թրաֆիքինգի դեմ պայքարը ներառում է թրաֆիքինգի կանխարգելման գործընթացը:

Համաձայն Ա.Մ. Բանդուրկայի, թրաֆիքինգի կանխարգելման առավել արդյունավետ միջոցներից են՝

- ազգաբնակչության հետ տարվող իրավական, քարոզչական և բացատրական աշխատանքները,
- թրաֆիքինգի և դրան նպաստող պայմանների ժամանակին հայտնաբերումը և չեզոքացումը,
- մեղավորների և տուժողների հայտնաբերմանն ուղղված օպերատիվ-հետախուզական գործունեության ակտիվացումը և թրաֆիքինգի դեմ պայքարում առկա թերությունների վերացումը,

• թրաֆիքինգի դեմ պայքարի գործընթացին ոստիկանության և հասարակության համատեղ ներգրավումը:<sup>37</sup>

Մասնագիտացված գրականության մեջ բազմաթիվ անգամ նշվել է, որ պետք է ձեռնարկվեն կանխարգելման այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են՝ սոցիալական և տնտեսական նախաձեռնությունները, հետազոտությունները և հանրությանն ու հնարավոր գոհերին ուղղված ՁԼՄ-ների քարոզարշավները: Ռազմավարությունները, ծրագրերը և ձեռնարկված այլ միջոցառումները պետք է ներառեն համագործակցություն հասարակական և այլ համապատասխան կազմակերպությունների հետ: Պետությունները պետք է միջոցառումներ ձեռնարկեն կամ ամրապնդեն դրանք, այդ թվում երկկողմ և բազմակողմ համագործակցության տեսքով<sup>38</sup>: Եվ քանի որ թրաֆիքինգը սոցիալական երևույթ է, հետևաբար, դրա դեմ պայքարում անհրաժեշտ է օգտագործել նաև սոցիալական կանխարգելումը: Վերջինիս հիմնական ուղղություններից են՝

• սոցիալական գովազդը, որի միջոցով ներկայացվում է թրաֆիքինգի էությունը, ձևերը, հետևանքները, ստեղծված ծանր իրավիճակներից դուրս գալու ճանապարհներն ու եղանակները,

• օտարերկրյա գործատուների և ամուսնական գործակալությունների գործունեության ստուգում,

• բացատրական աշխատանքների իրականացումը արտասահմանում աշխատելու մեկնող անձանց և միգրանտների հետ,

• ազգաբնակչության իրավական մակարդակի բարձրացումը,

• անչափահասներին և նրանց ծնողներին երեխաների իրավունքների, արտերկրում աշխատանքի և ուսման մասին լուսաբանումը,

• թրաֆիքինգի գոհերին օգնելը աշխատանքի տեղավորման, բնակարանների տրամադրման և այլ հարցերում<sup>39</sup>:

Ողջ աշխարհում թրաֆիքինգի և հարկադիր աշխատանքի դեմ պայքարում մեծանում է գործատուների և աշխատողների կազմակերպությունների և գործարարների դերակատարումը: Աշխատողների իրավունքների պաշտպանության ոլորտում կարևոր քայլ էր Արհեստակցական միությունների Միջազգային կոնգրեսի (ITUC/ԱՄՄԿ) կողմից 2007 թվականի դեկտեմբերին Վաշինգտոնում գումարված՝ ՄԱԿ-ի Գլխավոր խորհրդի նիստում միջոցառումների ծրագրի ընդունումը, որով կուղղորդվի արհեստակցական միությունների հետագա գործունեությունը հարկադիր աշխատանքի և թրաֆիքինգի բնագավառներում: Խորհուրդը կարևոր համարեց հարկադիր աշխատանքի կամ թրաֆիքինգի դեմ պայքարող արհեստակցական միությունների համաշխարհային դաշինքի ստեղծումը:

Քանի որ, ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ ՀՀ-ում վերջին տարիներին մեծ ուշադրություն է դարձվում աշխատանքային շահագործմանը և հարկադիր

<sup>37</sup> А.М. Бандурка. Противодействие торговле людьми.- Киев-Харьков, 2003.-С.112.

<sup>38</sup> Anti-Trafficking Training Materials for Judges and Prosecutors. Background reader, Vienna, 2006,р.83

<sup>39</sup> А.М. Бандурка. Противодействие торговле людьми.- Киев-Харьков, 2003.-С.190-192.

աշխատանքին, անհրաժեշտ է նշել աշխատանքի պետական տեսչության մասին, որը ՀՀ-ում աշխատանքային օրենսդրության և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ իրավական ակտերի կիրարկման նկատմամբ պետական հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմինն է:

Համաձայն 2005 թվականի մարտի 24-ի “Աշխատանքային պետական տեսչության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի, աշխատանքի պետական տեսչության խնդիրներից են՝ աշխատանքի պայմանների, աշխատողների աշխատանքային ազատությունների և իրավունքների պահպանման և պաշտպանության ապահովումը, ինչպես նաև աշխատանքային օրենսդրության և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ իրավական ակտերի խախտումների կանխարգելումը, հետևաբար, աշխատանքային տեսուչները ստուգումներ կատարելու ընթացքում կարող են հայտնաբերել աշխատանքային շահագործման և հարկադիր աշխատանքի դեպքեր: Առաջնորդվելով նույն օրենքի 6-րդ հոդվածով, որի համաձայն “աշխատանքային օրենսդրության և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ իրավական ակտերի կիրարկման նկատմամբ պետական հսկողության և վերահսկողության իրականացման ընթացքում աշխատանքի պետական տեսչությունը համագործակցում է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների ու հասարակական միավորումների հետ՝ փոխանակելով համապատասխան տեղեկատվություն”, և 16-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, որի համաձայն “աշխատանքի պետական տեսուչն իր լիազորություններն իրականացնելիս պարտավոր է ստուգումների ընթացքում ՀՀ աշխատանքային օրենսդրության և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ իրավական ակտերի՝ հանցագործության հատկանիշներ պարունակող խախտումների մասին նյութերը ներկայացնել աշխատանքի գլխավոր պետական տեսուչին”, դառնում է ակնհայտ, որ աշխատանքային շահագործման և հարկադիր աշխատանքի դեպքերի առկայության պարագայում տեսչությունը կարող է արդյունավետ պայքարի միջոցներ իրականացնել՝ ղեկավարվելով ՀՀ գործող օրենսդրությամբ՝ ստուգման արդյունքում ստացված տեղեկատվությունը հաղորդելով համապատասխան մարմիններին: Ելնելով վերագրյալից, անհրաժեշտ է թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում հնարավորինս ներգրավվել աշխատանքային տեսուչներին՝ պայքարն առավել արդյունավետ դարձնելու համար:

Ամփոփելով վերոգրյալը, չմանրամասնելով յուրաքանչյուր կառույցի դերն ու նշանակությունը, ընդհանուր առմամբ հարկ է նշել, որ թրաֆիքինգի կանխարգելման գործընթացում հատուկ կարևորվում է պետական մարմինների, միջազգային և հասարակական կազմակերպությունների միջև համագործակցությունը: Կան բազմաթիվ կառույցներ, որոնք զբաղվում են այդ հարցերով ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային մակարդակով և դրանց համատեղ աշխատանքը թրաֆիքինգի կանխարգելումն ու պայքարը կդարձնի ավելի համակարգված և արդյունավետ:

**ԹԵՄԱ 3. ՄԱՐԴԿԱՆՑ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ (ԹՐԱՖԻՔԻՆԳԻ) ԶՈՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՎԱՐՎՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

1. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարում Հայաստանի Հանրապետության ներգրավման նախադրյալները
2. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի գործընթացը Հայաստանի Հանրապետությունում
3. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի ոլորտում սոցիալական քաղաքականության առանձնահատկությունները, ոլորտը կարգավորող իրավական ակտերը, գոհերին ցուցաբերվող աջակցությունը

**1. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարում Հայաստանի Հանրապետության ներգրավման նախադրյալները**

Այսօր պարզ է դարձել, որ մարդկանց առևտրի մեջ ներքաշված են ինչպես աղքատ, այնպես էլ զարգացող և զարգացած երկրները, այն կարող է կատարվել ինչպես երկրի ներսում, այնպես էլ երկրի սահմաններից դուրս և խնդիրը հավասարաչափ արդիական է թե՛ զարգացած ժողովրդավարություն ունեցող, թե՛ անցումային շրջանում գտնվող երկրների և թե՛ տոտալիտար պետությունների համար:

Պահանջարկը առաջարկ է ծնում: Հայաստանում, որի տնտեսությունը անցյալ դարի 90-ական թվականներին հզոր հարված ստացավ, քայքայվեց երկրի ողջ ենթակառուցվածքը և թափ առան միգրացիոն գործընթացները, ստեղծվեցին ավելի քան բարենպաստ պայմաններ այդ պահանջարկը բավարարելու համար:

Դեռևս 90-ականների սկզբին Հայաստանը վավերացրեց ՄԱԿ-ի «Երեխաների իրավունքների մասին» և «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիաները, ստանձնելով համապատասխան պարտավորություններ:

Վավերացնելով ՄԱԿ-ի «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի» կոնվենցիան և դրան կից երկու արձանագրությունները, Հայաստանի կառավարությունը հաստատեց իր անհանգստությունը երկրում տիրող իրավիճակով և պատրաստակամությունը կազմակերպված պայքարելու երևույթի դեմ: Միաժամանակ աշխատուժի ազատ տեղաշարժը ապահովելու նպատակով ստորագրվեցին միջպետական պայմանագրեր ԱՊՀ մի շարք երկրների, մասնավորապես Ուկրաինայի, Ռուսաստանի Դաշնության, Վրաստանի, Թուրքմենիայի և ԱՊՀ այլ պետությունների հետ: Ներկայումս աշխատանքներ են տարվում այլ երկրների հետ նմանատիպ պայմանագրեր ստորագրելու ուղղությամբ:

Այսպիսով, մարդկանց վաճառքը, հատկապես կանանց և աղջիկների վաճառքը սեռական շահագործման նպատակով, սկսեց ընկալվել որպես միջազգային կազմակերպված հանցավորության տեսակ, հավասարվելով զենքի և թմրամիջոցների վաճառքին:

Այս ամենին հաջորդեց 2002 թվականի ԱՄՆ-ի պետքարտուղարության կողմից հրապարակած երկրորդ ամենամյա համաշխարհային զեկույցը մարդկանց հարկադրական տեղափոխման, վաճառքի և շահագործման մասին, որում նշվեց, թե որ երկրներն են մարդկանց առևտրի զգալի թվով զոհերի “ծագման գոտի, տարանցման ճանապարհ կամ վերջնական հանգրվան”։ Հիմք ընդունելով պետությունների պատրաստակամությունը պայքարելու թրաֆիքինգի դեմ, երկրները բաժանվեցին երեք խմբերի: Հայաստանը դասվեց երրորդ երկրների խմբին, ինչը նշանակում էր, որ երկրի իշխանությունները չեն ապահովում մարդկանց առևտրի դեմ պայքարի նվազագույն չափանիշները: Դա իր հերթին նշանակում էր, որ Հայաստանի նկատմամբ, որպես մարդկանց առևտրի դեմ պայքարելու համար զգալի ջանքեր չգործադրող երկիր, կարող են կիրառվել մարդասիրական ծրագրերի և առևտրի հետ կապ չունեցող տնտեսական պատժամիջոցներ, ան է՝ կկրճատվի որոշակի ծրագրերի միջազգային ֆինանսավորումը:

## **2. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի գործընթացը Հայաստանի Հանրապետությունում**

Առաջին անգամ Հայաստանի Հանրապետությունում մարդկանց առքուվաճառքի մասին բարձրաձայն խոսվեց 1999 թվականին, երբ Միգրացիայի Միջազգային Կազմակերպության հայաստանյան գրասենյակի աջակցությամբ իրականացվեց ուսումնասիրություն՝ Հայաստանից մարդկանց ապօրինի փոխադրումների և թրաֆիքինգի վերաբերյալ: Այն, ըստ էության, բացահայտում էր թրաֆիքինգի միայն մեկ տեսակը՝ սեռական շահագործումը: Բայց հենց այդ հետազոտության շնորհիվ խնդիրը վեր հանվեց սոցիալական տեսադաշտ: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Հայաստանը անկանոն միգրացիայի տեսանկյունից ելքի, որոշ չափով էլ տարանցիկ երկիր է, առկա է հանրապետությունից կանանց և երեխաների անօրինական փոխադրում. հարցված կանանց 73% դարձել էին նման փոխադրումների զոհ, իսկ նրանց մոտ 60 %-ին հարկադրել էին մարմնավաճառությամբ զբաղվել: Պարզվեց նաև, որ թրաֆիքինգի նպատակով փոխադրումները Հայաստանից հիմնականում իրականացվել են դեպի ՄԱԷ և Թուրքիա:

Վերոգրյալը հիմք հանդիսացավ 2002 թվականին ՀՀ վարչապետի որոշմամբ ՀՀ ԱԳՆ համակարգմամբ թրաֆիքինգի հարցերով միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու համար, որի առաջ դրվեց խնդիր՝ ուսումնասիրել մարդկանց անօրինական փոխադրումների, տեղափոխման, առքուվաճառքի հետ կապված իրավիճակը և առաջարկություններ ներկայացնել ՀՀ կառավարություն՝ երևույթի դեմ պայքարի միջոցների մասին: Առաջարկությունները ներկայացվեցին եռամյա (2004-2006թթ.) Ազգային ծրագրի տեսքով, որի ավարտից հետո մշակվեց և իրականացվեց երկրորդ (2007-2009թթ.)/ Ազգային ծրագիրը, իսկ ներկայումս մեկնարկել է երրորդ 2010-2012թթ. Ազգային ծրագիրը:

Երկու նախորդ ծրագրերի շրջանակում իրականացվել են բազմաթիվ միջոցառումներ՝ ուղղված օրենսդրական բարեփոխումներին և կանխարգելմանը,



կազմակերպվել է զոհերի աջակցության գործընթացը, ստեղծվել է այդ գործընթացի իրականացման իրավական հիմքը: Թվով երրորդ Ազգային ծրագիրը նախորդ երկու ծրագրերի տրամաբանական շարունակությունն է:

**3. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի ոլորտում սոցիալական քաղաքականության առանձնահատկությունները, ոլորտը կարգավորող իրավական ակտերը, զոհերին ցուցաբերվող աջակցությունը**

Թրաֆիքինգի զոհերի նկատմամբ պետական սոցիալական քաղաքականության հիմնական ուղղությունները հստակ ձևակերպված են միմյանց հաջորդող գործողությունների Ազգային ծրագրերում և նպատակ ունեն ոչ միայն նպաստել երևույթի կանխարգելմանը, այլև ստեղծել ու զարգացնել զոհերի օգնության արդյունավետ համապետական համակարգ:

Ծրագրում նախանշված թրաֆիքինգի առաջացման և տարածման սոցիալական պատճառների կանխարգելման ուղիներն են՝

- բնակչության շրջանում թրաֆիքինգի զոհ դառնալու ռիսկի նվազումը,
- քաղաքացիների զոհ դառնալու պայմանների բացահայտումն ու վերացումը:

Զոհերի սոցիալ-հոգեբանական վերականգնման ու վերաինտեգրման ուղղությամբ ձեռնարկվող քայլերն են՝

- զոհերի հայտնաբերումն ու նույնացումը,
- զոհերի համար հոգեբանական, իրավական, սոցիալական, բժշկական և այլ սոցիալական ծառայություններ ներառող նվազագույն ստանդարտ փաթեթի ապահովումը,
- զոհերի լիարժեք սոցիալական ադապտացման ու վերականգնման, սոցիալական միջավայրում վերաինտեգրման ապահովումը:

Այսօր Հայաստանում դեռևս հաղթահարված չէ աղքատությունը, որն ինքնին սոցիալապես վտանգավոր է հասարակության համար: Բնակչության մի ստվար զանգված չունի աշխատանք, չունի առողջական խնդիրներ լուծելու հնարավորություն և ունի տեղեկացվածության ցածր մակարդակ: Այս պայմանները նպաստում են թրաֆիքինգի տարածմանը, որի կանխարգելման համար անհրաժեշտ է իրականացնել պրոֆիլավորում, այն է՝ սոցիալական ռիսկի չափի գնահատում ըստ առանձին սոցիալական խմբերի:

Պրոֆիլավորման ողջ գործընթացը բաժանվում է երեք փուլի՝ սոցիալ-ժողովրդագրական իրավիճակի մոնիտորինգ, աշխատաշուկայում տիրող իրավիճակի և հավաքված տվյալների համեմատական վերլուծություն, (հնարավորությունները հստակեցնելու համար), կարճ ժամկետներում անձի կողմից աշխատանքի տեղավորվելու ցանկության և հնարավորության գնահատում:

Պրոֆիլավորման սոցիալ-ժողովրդագրական չափորոշիչներն են. անձի՝

- **Տարիքը**՝ առանձնացվում է մի քանի խումբ. երեխաներ և դեռահասներ (մինչև 18 տարեկան), երիտասարդներ (18 – 25 տարեկան), կանայք (մինչև 35 տարեկան) և տղամարդիկ (տարիքը տատանվում է մինչև 55 տարեկան);
- **Բնակության վայրը**՝ բաժանվում են քաղաքի բնակիչների, գյուղի բնակիչների, գյուղից քաղաք տեղափոխվածների;
- **Կրթությունը**՝ բաժանումը կատարվում է ըստ կրթական ցենզի;
- **Զբաղմունքը**՝ գործազուրկներ, այդ թվում մանկատների, գիշերօթիկ դպրոցների շրջանավարտներ, մշտական աշխատանք չունեցող անձինք, տնային տնտեսուհիներ, ուսանողներ, միգրանտներ;
- **Վարքային մտադրությունները**՝ նրանք, ովքեր ցանկանում են մեկնել այլ երկիր աշխատելու, ամուսնանալու, այլ մտադրություններով, բռնության զոհեր
- **Պատկանելիությունը սոցիալապես խոցելի, մարզինալ խմբերին**՝ աղքատ, անբարեկեցիկ ընտանիքների երեխաներ, առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ, “սոցիալական ռիսկի” տակ գտնվող ընտանիքներից կանայք և աղջիկներ, մանկատան, հատուկ դպրոցների սաներ, միայնակ, բազմազավակ մայրեր:

Հաշվարկների արդյունքում ձևավորվում է երկու թիրախ խումբ: Դրանցից մեկը համագործակցում է աջակցություն տրամադրող մարմինների հետ՝ դրսևորելով շահագրգռվածություն սեփական ճակատագրի նկատմամբ, մյուսը հրաժարվում է բոլոր առաջարկություններից, դժվարությամբ է համագործակցում տարբեր մարմինների հետ, չունի հստակ պահանջ կամ պահանջը չափազանց և անհամապատասխան բարձր է:

Ի լրումն վերոգրյալի նշենք, որ ըստ դիտարկումների, թրաֆիքինգի ենթարկվելու վտանգի տեսանկյունից առավել ռիսկային են կանայք և երեխաները, ընդ որում, կանանց շրջանում առավել խոցելի են ցածր կրթական մակարդակով, անկայուն եկամուտ ունեցող երիտասարդ կանայք, բազմազավակ, միայնակ մայրերը, բռնության զոհերը և մարմնավաճառները: Երեխաների շրջանում առավել խոցելի են անբարենպաստ ընտանիքների, առանց ծնողական խնամքի մնացած երեխաները, հատուկ դպրոցների սաները, մանկատների շրջանավարտները: Նրանց բնորոշ է իրավական և սոցիալական անպաշտպանվածությունը, ցածր իրավագիտակցությունը, սոցիալական պաշտպանության համակարգի մասին լիարժեք տեղեկացված չլինելը, կամ այդ համակարգի նկատմամբ թերահավատությունը<sup>40</sup>:

### **Թրաֆիքինգի ոլորտը կարգավորող իրավական բազան**

<sup>40</sup> ՀՀ ԱՍՀՆ և ԵԱՀԿ «Թրաֆիքինգի դեմ պայքարի աջակցության և ռեսուրս կենտրոն» ծրագրի տարեկան զեկույցը, 2010թ.

2010 թվականի սեպտեմբերին ՀՀ կառավարության որոշմամբ<sup>41</sup> հաստատված “Հայաստանի Հանրապետությունում 2010-2012 թվականների ընթացքում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման” Ազգային ծրագիրը երրորդ եռամյա ծրագիրն է: Այն ունի համապատասխան կատարողական ցուցիչներ և հանդիսանում է հանրապետությունում թրաֆիքինգի դեմ պայքարը կանոնակարգող հիմնական փաստաթուղթը: Ծրագիրը մշակվել է հաշվի առնելով երկրորդ՝ 2007-2009 թվականների ազգային ծրագրի իրականացման ընթացքում ի հայտ եկած խնդիրները: Ծրագրում տեղ գտած ռազմավարություններն ու գործողությունները ուղղված են մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի արդյունավետ կազմակերպմանը և ներառված են 6 հիմնական բաժիններում՝

- 1) մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի օրենսդրություն և օրենքների կիրառում,
- 2) մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) կանխարգելում,
- 3) մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերի պաշտպանություն և աջակցություն,
- 4) համագործակցություն,
- 5) ուսումնասիրությունների կատարում, մշտադիտարկում և գնահատում,
- 6) համակարգում:

Հարկ է նշել, որ թրաֆիքինգի դեմ պայքարում և կանխարգելմանը, և աջակցությանն ուղղված միջոցառումների իրականացման համար կարևոր պայման է պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության փոխգործակցության կազմակերպական-իրավական հիմքերի ստեղծումը և համագործակցության ապահովումը: Խնդիրն իր լուծումը ստացավ ՀՀ Կառավարության կողմից Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգի հաստատմամբ: Փաստաթուղթը սահմանում է համագործակցության այն համակարգը, որի միջոցով լիազորված պետական կառավարման մարմիններն իրականացնում են իրենց պարտականությունները թրաֆիքինգի զոհերի իրավունքների պաշտպանության և այն զարգացնելու ուղղությամբ՝ իրենց գործունեության մեջ ռազմավարական համագործակցություն ծավալելով հասարակական կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության հետ<sup>42</sup>:

<sup>41</sup> 2010թ. սեպտեմբերի 3-ի ՀՀ Կառավարության թիվ 1140-Ն Որոշում

<sup>42</sup> ՀՀ կառավարության 2008թ. N1385-Ս որոշում

Կարգը նաև սահմանում է հիմնական դերակատարների գործունեության սկզբունքները, ուղղորդման նպատակը, հստակեցնում է զոհերի հայտնաբերման աղբյուրները և տեղեկատվության փոխանակման առանձնահատկությունները, զոհերի նույնացման և աջակցության ձևերը:

*Պաշտպանության համակարգը* ձևավորվում է համագործակցող ՀԿ-ներից և թրաֆիքինգի զոհերի ուղղորդման գործում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված վեց պետական կառավարման մարմիններից՝ ՀՀ արտաքին գործերի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ առողջապահության, ՀՀ տարածքային կառավարման նախարարություններ և ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն ու ՀՀ ազգային անվտանգության ծառայություն: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը պատասխանատու է զոհերի աջակցության և դրա համակարգման համար:

*Գործունեության սկզբունքը* համագործակցությունն է. պետական կառավարման լիազորված մարմինները գործակցում են միմյանց և համագործակցող ՀԿ-ների հետ՝ զոհերի պաշտպանության և աջակցության հարցերում և համակարգում են իրենց աղբյուրներից ստացվող տեղեկատվության փոխանակումը միմյանց միջև:

*Ուղղորդման հիմնական նպատակն է* ապահովել թրաֆիքինգի զոհերին մատուցվող ծառայությունների որակը և մատչելիությունը, սկիզբ դնել ինտեգրման գործընթացին:

*Տեղեկատվության փոխանակումը* տեղի է ունենում երկու եղանակով՝ համապատասխան մարմիններին հանցագործության մասին տեղեկատվություն տրամադրելու և զոհի մասին տեղեկատվություն տրամադրելու միջոցով:

*Զոհերի հայտնաբերման աղբյուր են* հանդիսանում ինչպես բնակչությունը, այնպես էլ պետական մարմինների աշխատակազմերի համապատասխան կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումները՝ իրենց գործառույթների շրջանակներում: Թրաֆիքինգի զոհին հայտնաբերող կողմերը իրականացնում են բոլոր նախատեսված ու անհրաժեշտ գործողությունները, օգտագործելով միմյանց միջոցներն ու հնարավորությունները: Այս պարագայում կարևոր է, որպեսզի թրաֆիքինգի զոհերի հետ աշխատող մասնագետները տիրապետեն նրանց հետ հարցազրույցի վարման էթիկական հիմնական սկզբունքներին:

Դրանք են<sup>43</sup>.

- **Չվնասել.** Եթե կա որևէ հիմք կասկածելու, որ հարցազրույցը կամ բժշկական հետազոտումը կբերի զոհի իրավիճակի վատթարացմանը, ապա այդ կոնկրետ պահին պետք չէ նախաձեռնել այդպիսի գործողություն: Առքուվաճառքի առարկա դարձած անձանց աջակցություն ցուցաբերելը՝ արդեն իր իսկ բնորոշմամբ ռիսկային գործոն է, որը լիովին բացառել՝ անգամ շատ լավ անվտանգության

<sup>43</sup> “Прямая помощь жертвам торговли людьми”, МОМ и ОБСЕ, Москва, 2010.

համակարգի առկայության դեպքում, հնարավոր չէ: Ապահովել անվտանգությունը: Մինչ թրաֆիքինգի գոհի հետ հարցազրույց սկսելը, անհրաժեշտ է համոզված լինել, որ նա իրեն պաշտպանված է զգում: Դա թույլ կտա ապահովել երկխոսությունը:

- Ապահովել գաղտնիությունը: Անանունության պահպանումը և ապահովումը թրաֆիքինգի գոհերի հետ աշխատող կազմակերպությունների և մասնագետների հիմնարար պարտավորությունն է:
- Տրամադրել տեղեկություններ: Մարդկանց շահագործման գոհերի կարևորագույն իրավունքներից մեկը տեղեկություններ ստանալու իրավունքն է: Որպեսզի գոհերը ընդունեն ճիշտ որոշումներ իրենց առողջության, բարեկեցության և ապագայի հարցերում, և որպեսզի նրանք ունենան իրատեսական ակնկալիքներ իրենց տրամադրվող ծառայությունների վերաբերյալ, անհրաժեշտ է գոհերին տրամադրել ամբողջական տեղեկություններ:
- Հետևել հարցերի հաջորդականությանը: Անհրաժեշտ է պահպանել հարցերի որոշակի հերթականություն և հարցազրույցը սկսել էմոցիոնալ լարվածություն չառաջացնող հարցերից, այն է՝ ուղղել նախ հարցեր, որոնք ընդգծում են անձի վիճակի մասին անհանգստությունը (առողջություն, անձնական կարիքներ, անվտանգության հետ կապված հարցեր և այլն): Նմանատիպ հարցերը օգնում են ստեղծել վստահության մթնոլորտ: Այնուհետև կարելի է ուղղել արդեն չեզոք հարցեր, օրինակ՝ հարցնել անունը, ծննդավայրը, նախկին զբաղմունքը և այլն: Ավելի նրբանկատություն պահանջող հարցերը տրվում են հանդիպման ավարտին, երբ աշխատակցի և գոհի միջև ստեղծվում են երկկողմանի վստահության մթնոլորտ: Շատ կարևոր է ավարտել հարցազրույցը նվազ զգայուն հարցերով և չթողնել անձին ճնշված կամ հուզական վիճակում: Հարկավոր է հարցազրույցը ավարտել այնպիսի խոսքերով, որոնք ընդգծում/մատնացույց են անում գոհի ուժեղ կողմերը և քաջությունը:
- Լսել ակտիվ: Անհրաժեշտ է լիարժեք կենտրոնանալ հարցազրույցի եկած անձի, նրա խոսքերի վրա, թույլ տալ խոսողին արտահայտել զգացումները և մանրամասն նկարագրել իրադարձությունները, չշտապեցնել, չպահանջել պատասխաններ: Երկար ընդմիջումները հարցազրույցի ժամանակ կարող են նշանակել, որ անձը փորձում է ճիշտ կառավարել իր զգացումները, վերհիշել մանրուքները և այլն: Պետք է լինել ուշադիր և չփորձել ընդհատել խոսողին կամ ավարտել նրա միտքը, թույլ տալ նրան ինքնուրույն գտնել իր մտքերի արտահայտման ճիշտ ճանապարհը:
- Հավատալ, ոչ թե դատապարտել: Աջակցությանն ուղղված հարաբերությունները հիմնված են վստահության վրա: Վստահությունը

պետք է նախ ցուցաբերվի աջակցություն տրամադրող ծառայության աշխատակցի կողմից: Նա պետք է պատրաստ լինի հավատալու գոհին: Սակայն պետք է հիշել նաև, որ գոհերը իրենք կարող են հիմքեր ունենալ չհավատալու, ինչպես նաև շփոթեցնելու կամ թաքցնելու ինչ-որ տեղեկություններ և այլն:

- Պահպանել պրոֆեսիոնալիզմը. վերաբերվել անձին հարգանքով և հավասար հիմունքներով: Շատ հաճախ մասնագետները ընտրում են իշխող տոն կամ անգամ անցնում են հաղորդակցման այնպիսի ոճի, որը ենթադրում է մտավոր կամ մասնագիտական առավելություն՝ դրանով իսկ աջակցություն ստացող անձին տալով անօգնականի և ենթարկվողի դեր: Աջակցություն տրամադրող ծառայության աշխատակիցները պետք է պահպանեն պրոֆեսիոնալիզմը և վարքի կանոնները, միևնույն ժամանակ ցուցաբերելով կարեկցանք և աջակցություն:

Համաձայն ազգային ուղղորդման կարգի, թրաֆիքինգի գոհերին տրամադրվում է աջակցություն, որի ծավալը պայմանավորված է նրանց նույնացման երեք փուլերով՝ նախնական, միջանկյալ և վերջնական: Ընդ որում, եթե նախնական փուլում սահմանված չափի օգնությունը հնարավոր է ցուցաբերել միայն ՀԿ-ների ուժերով, ապա հետագա գործընթացի արդյունավետությունը շատ ավելի է բարձրանում ջանքերը միավորելու դեպքում, քանի որ հաջորդ երկու փուլերի հիմնական ուղղվածությունը գոհերի սոցիալ-բժշկական վերականգնումն է և հասարակության մեջ նրանց ինտեգրումը, ինչը պահանջում է համալիր և համատեղ միջոցառումների կազմակերպում և իրականացում, որոնք թույլ կտան վերականգնել անձի սոցիալական կարգավիճակը, կազմակերպել պետպատվերի շրջանակում նրա բուժհետազոտությունն ու բուժօգնությունը, ընդգրկել զբաղվածության պետական ծրագրերում, աջակցել աշխատանքի տեղավորման հարցում:

Կարգը հղում է կատարում այն իրավական ակտերին, որոնք անմիջապես առնչվում են գոհերի աջակցության հիմնախնդրին և ապահովում են նույնացման երրորդ փուլում նախատեսված աջակցության փաթեթի տրամադրումը: Դրանք են “Սոցիալական աջակցության մասին” ՀՀ օրենքը և “Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին” ՀՀ կառավարության 2009 թվականի N 1003-Ն որոշումը՝ պետպատվերի շրջանակում թրաֆիքինգի գոհերին բուժօգնություն ցուցաբերելու մասին:

Թրաֆիքինգի դեմ պայքարի համատեքստում այս ցանկին հարկ է ավելացնել “Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին” ՀՀ օրենքը, “Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսված միջոցների սահմաններում թրաֆիքինգի գոհերին սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ մատուցելու նպատակով կնքվող քաղաքացիական պայմանագրերով տրվող սուբսիդիայի հիմքում

դրվող ծախսերը տարբերակելու կարգը” հաստատելու մասին ՀՀ կառավարության 2009 թվականի N 358-Ն որոշումը, “ՀՀ կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին” ՀՀ կառավարության 2010 թվականի N718-Ն որոշումը՝ ՀՀ մարզպետարանների Երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների վերանվանման մասին և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի ու ՀՀ տարածքային կառավարման նախարարների 2010 թվականի N66-Ն և N07-Ն համատեղ հրամանը՝ ՀՀ մարզպետարանների վերանվանված բաժինների կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու մասին:

Թեև «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքում “թրաֆիքինգ” բառը բացակայում է, սակայն առկա դրույթները որոշ չափով կիրառելի են թրաֆիքինգի գոհերի նկատմամբ, թույլ են տալիս ապահովել թրաֆիքինգից տուժածների վերականգնումը և աջակցության տրամադրումը: Այդ կապակցությամբ, վերադառնալով պրոֆիլավորման չափորոշիչներին, նշենք, որ օրենքում խոցելի խմբերի սահմանման համար օգտագործվում է “դժվար իրավիճակում հայտնված անձինք” հասկացությունը, որը ներառում է հետևյալ սոցիալական խմբերը. հաշմանդամություն ունեցող, տարիքի հետ կապված ինքնասպասարկման ունակությունը կորցրած, հիվանդ, աղքատ և երկարատև գործազրկության մեջ հայտնված անձինք, առանց ծնողական խնամքի մնացած երեխաները, ընտանիքում կոնֆլիկտների, դաժան վերաբերմունքի, բռնության գոհերը, անօգնական, միայնակ, սոցիալական մեկուսացման մեջ գտնվող, արտակարգ իրավիճակում հայտնված անձինք:

Ինչպես երևում է դասակարգումից, տեսադաշտից դուրս են մնում ռիսկի այնպիսի գործոններ, ինչպիսիք են բնակավայրը, կրթությունը, որոշ չափով նաև զբաղմունքը: Առանձին դեպքերում բացակայում են չափման միջոցները (օրինակ, չկան կոնֆլիկտի, մեկուսացման կամ բռնության աստիճանը գնահատող ցուցիչները):

“Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին” ՀՀ օրենքը ուղղված է ոչ միայն բնակչության համար վտանգավոր տարբեր ռիսկերի կանխարգելմանը, այլև ապահովում է ծանր պայմաններում գտնվող անձանց ինտեգրումը/վերաինտեգրումը հասարակություն:

Այս օրենքում օգտագործվում է “աշխատաշուկայում անմրցունակ խմբեր” հասկացությունը, որը ներառում է հաշմանդամներին, ազատագրկման վայրերից վերադարձածներին, աշխատունակ տարիքի հասած առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին և նրանց թվին պատկանող անձանց /առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք են համարվում 18-23 տարեկան այն անձինք, որոնց ծնողները (կամ միակ ծնողը) մինչև նրանց 18 տարին լրանալը մահացել են, զրկվել են ծնողական իրավունքներից, ճանաչվել են անգործունակ, խուսափել են երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ճանաչվել են մահացած, անհայտ բացակայող կամ անհայտ են /”Առանց

ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին” ՀՀ օրենք//, ժամկետային զինձառայությունից վերադարձած անձանց, փախստականներին, երեք տարուց ավելի գործազուրկի կարգավիճակ ունեցողներին,։ Թվարկված սոցիալական խմբերը կարող են պոտենցիալ զոհ լինել և այս առումով կանխարգելումը զբաղվածության ծրագրերի միջոցով կարևոր է և անհրաժեշտ։ Մյուս կողմից, կարևորելով թրաֆիքինգի զոհերի սոցիալական վերականգնման և վերաինտեգրման խնդիրները, օրենքում կատարվեցին լրացումներ և թրաֆիքինգի զոհերը մտան անմրցունակ խմբերի ցանկ, ստանալով լրացուցիչ երաշխիքներ աշխատանքի տեղավորման հարցում։

### **Թրաֆիքինգի զոհերին ցուցաբերվող աջակցությունը**

Նախորդ բաժնում նշվեց ոլորտը ուղղակի կամ անուղղակի կերպով կարգավորող իրավական դաշտը։ Ըստ էության, թրաֆիքինգի զոհերի աջակցության ողջ գործընթացը կարելի է բաժանել երկու փուլի, որից մեկը նախատեսում է օգնության ու աջակցության տրամադրմանն ուղղված միջոցառումների, իսկ մյուսում՝ ինտեգրման/վերաինտեգրման միջոցառումների իրականացում։

“Սոցիալական աջակցության մասին” ՀՀ օրենքի համաձայն, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց տրամադրվում է անհրաժեշտ խորհրդատվություն, ցուցաբերվում է իրավաբանական, վերականգնողական, դրամական, բնափրային օգնություն, տրամադրվում է ժամանակավոր կացարան, կազմակերպվում է նրանց խնամքը։ Ժամանակավոր կացարանի և բուժօգնության տրամադրմանը վերաբերող դրույթների կատարումը ապահովվում է այն երկու որոշումներով, որոնք վերաբերում են պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեցող բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկի ընդլայնմանը և ապաստարանում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց վերականգնման աշխատանքների կազմակերպմանը։ Բուժօգնությանն ուղղված միջոցառումները կազմակերպում է ՀՀ առողջապահության նախարարությունը՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջնորդությամբ, իսկ կացարանում վերականգնումը ապահովում է մասնագիտացված կազմակերպությունը՝ բյուջեից հատկացված ֆինանսական միջոցների հաշվին։

“Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին” ՀՀ օրենքի հիմնական սկզբունքը աշխատուժի (ներքին և արտաքին) ազատ տեղաշարժի ապահովումն է, ինչը թրաֆիքինգի ենթարկվելու ռիսկից խուսափելու տեսանկյունից ունի կանխարգելիչ բնույթ։ Օրենքը սահմանում է զբաղվածության պետական ծառայության լիազորությունները, որոնց շարքում են գործատուներից, օտարերկրյա պետությունների համապատասխան մարմիններից թափուր աշխատատեղերի մասին տեղեկատվության հավաքագրումը, աշխատուժի արտաքին և ներքին տեղաշարժի կարգավորմանն ուղղված ծրագրերի իրականացումը, աշխատանք փնտրող անձանց հարմար աշխատանք ընտրելու



հարցում օժանդակությունը: Մյուս բաղադրիչը՝ ինտեգրումն ու վերաինտեգրումը, իրականացվում է զբաղվածության ծրագրերի միջոցով: Ներառելով թրաֆիքինգի զոհերին անմրցունակ խմբերի ցանկում, հնարավորություն է ստեղծվում նրանց լրացուցիչ երաշխիքների տրամադրել զբաղվածության հատուկ ծրագրերի միջոցով, մասնավորապես, մասնագիտական ուսուցման, գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցման, աշխատանքի նպատակով այլ բնակավայր տեղափոխվելու ծրագրերի միջոցով:

Թրաֆիքինգի դեմ պայքարում կարևորագույն գործոններից մեկն այն է, որ ազգային մակարդակով տեղի ունեցող տեղաշարժերը բերում են փոփոխությունների տարածքային մակարդակում: Խոսքը, մասնավորապես, ՀՀ մարզպետարաններում 2005 թվականից գործող երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների մասին է, որոնց գործունեությունը և գործառույթները ընդհանուր միտումների ազդեցության տակ վերանայվեցին և ենթարկվեցին փոփոխությունների: Այսպես, բաժինները վերանվանվեցին՝ «Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժիններ», իսկ կանոնադրական խնդիրները համալրվեցին թրաֆիքինգի և գենդերային հիմնախնդիրներին վերաբերող հարցերով:

#### **ԹԵՄԱ 4. ՄԱՐԴԿԱՆՑ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ (ԹՐԱՖԻՔԻՆԳԸ) ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՏԵՄԱՆԿՅՈՒՆԻՑ**

- 1. Գենդեր հասկացությունը և մարդկանց շահագործումը (թրաֆիքինգը)**
- 2. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) գենդերային տեսանկյունները և առանձնահատկությունները**

##### **1. Գենդեր հասկացությունը**

Գենդերի առաջին սահմանումը կապված է ժամանակակից հասարակության ֆեմինիստական քննադատության հետ, ասել է թե՛ կնոջ խտրական վիճակի քննադատության հետ:

Անգլերեն “gender” բառը նշանակում է սեռ, քերականական սեռ կամ տեսակ՝ որոշակի դասի պատկանելու իմաստով: Այս տերմինը հումանիտար գիտություններում օգտագործվում է “սոցիալական սեռը” կենսաբանական սեռից՝ “sex”-ից տարբերելու նպատակով: Հայոց լեզվում ճշգրիտ համարժեքը չկա, ավելին, եթե փորձենք հայացնել, կտեսնենք, որ առաջանում են ոչ այնքան ցանկալի զուգահեռներ:

Հայտնի ամերիկացի սոցիոլոգ Էնտոնի Գիդդենսը առաջարկում է գենդերի հետևյալ սահմանումը..

*“Մենք պետք է տարբերակենք սեռը և գենդերը: Եթե սեռը վերաբերում է տղամարդու և կնոջ ֆիզիկական և մարմնական տարբերություններին, ապա “գենդեր” հասկացությունը շոշափում է նրանց հոգեբանական, սոցիալական և մշակութային*

*առանձնահատկությունները: Մեռի և գենդերի սահմանազատումը հիմնարար բնույթ է կրում, քանի որ տղամարդու և կնոջ շատ տարբերություններ պայմանավորված են այնպիսի պատճառներով, որոնք ըստ էության կենսաբանական չեն: Եթե անհատի սեռը կենսաբանորեն է կանխորոշվում, ապա գենդերը մշակութային և սոցիալական բնույթ ունի: Այսպիսով գոյություն ունեն երկու սեռ (տղամարդ և կին) և երկու գենդեր (տղամարդկային և կանացի)»<sup>44</sup>:*

Այս սահմանումը, ասես, գենդեր տերմինի նորովի օգտագործման յուրօրինակ ամփոփում է, որը կոչված է ցույց տալու տղամարդկանց և կանանց այն սոցիալական տարբերությունները, որոնք չի կարելի անտեսել:

Մեռի ավանդական դասական տեսության շրջանակներում սոցիալական տարբերությունները՝ որպես այդպիսին, չէին առանձնացվում: Առաջին հերթին շեշտվում էին սեռերի կենսաբանական տարբերությունները: Եվ, երբ խոսքը վերաբերում էր կնոջ հոգեբանական առանձնահատկություններին, ապա դրանք համարվում էին կենսաբանական գծերի շարունակություն: Հետագայում նման հայացքները դրսևորվեցին կնոջ “բնութենականության” հասկացությամբ, և նրա ցանկացած գործունեությանը բնագոյային կենսաբանական բնույթ էր վերագրվում: Այսպիսի կարծիքներն այսօր էլ լայն տարածում ունեն, մանավանդ գիտական շրջաններում: Գենդերային հիմնախնդրին վերաբերող աշխատությունների մեծ մասը սկսվում է այն դրույթից, որ կանայք և տղամարդիկ տարբերվում են միմյանցից: Իրոք, կենսաբանության տեսանկյունից դա այդպես է: Իգական և արական սեռի մարդանհատները տարբերվում են վերարտադրողական համակարգի կառուցվածքով և համապատասխանաբար վերարտադրողական գործունեությամբ: Ավելի վիճահարույց է կնոջ և տղամարդու կենտրոնական նյարդային համակարգի կառուցվածքային և գործառական տարբերությունների առկայության հարցը: Բայց, մյուս կողմից՝ կարելի է խոսել ամեն մի որոշակի մարդ-անհատի առանձնահատկությունների մասին՝ անկախ սեռային պատկանելությունից:

### **Մարդկանց շահագործումը (թրաֆիքինգը) և գենդերը**

Կանայք և տղամարդիկ տարբեր դերեր և պարտականություններ ունեն հասարակության մեջ, հետևաբար տարբեր է նրանց համար նաև ռեսուրսների և բարիքների մատչելիությունը:

Սկսած 1970-ական թվականներից, կանայք ռեկորդային քանակով մտնում են համաշխարհային աշխատաշուկա՝ որպես համեմատաբար ավելի էժան աշխատուժ: Կանանց շրջանում առկա մեծ գործազրկությունը և էժան աշխատուժը նրանց դարձնում են համաշխարհային աշխատաշուկայի համեմատաբար պահանջարկված աշխատուժի 60%-ը: Միաժամանակ, էժան աշխատուժ լինելու հանգամանքը կանանց դարձնում է ավելի խոցելի հարկադիր աշխատանք կատարելու տեսանկյունից:

<sup>44</sup> Anthony Giddens. Sociology. Polity Press, 2000

Բացի այդ, գոյություն ունեցող գենդերային կարծրատիպերը նվազեցնում են կանանց սոցիալական դերը, օտարում նրանց սեփականությունից, ինչի արդյունքում նրանք զրկվում են նյութական (եկամուտ, հող) և ոչ նյութական (Ժամանակ, մասնակցություն հասարակական-քաղաքական կյանքին) միջոցները վերահսկելու հնարավորությունից:

Դրան ավելանում է նաև երեխա ծնելու և խնամելու հանգամանքը, տնային աշխատանքը կատարելու պարտականությունը, որը չի վարձատրվում, ինչը կնոջը դնում է տղամարդուց կամ պետությունից տնտեսապես և սոցիալապես կախյալ վիճակում, որն էլ իր հերթին սպառնալիք է կնոջ տնտեսական և սոցիալական կայունությանը:

Հաճախ թրաֆիքինգի կանխարգելման նպատակով պետության կողմից ձեռնարկված միջոցները հռչակվում են որպես “կնոջը պաշտպանելուն ուղղված գործողություններ”՝ հաշվի չառնելով, որ դրանք սահմանափակում են կնոջ որոշ հիմնարար իրավունքները: Օրինակ՝ որոշ արաբական պետություններ արգելում են կանանց միգրացիան, ինչը իրականում մարդու ազատ տեղաշարժման ու տեղափոխման իրավունքի խախտում է, և ամրապնդում է կնոջ կախյալ կարգավիճակը: Վերջինս ավելի է մեծացնում կնոջ առուվաճառքի առարկա դառնալու ռիսկը:

Այս ամենը պահանջում է, որպեսզի վերացվեն թրաֆիքինգի արմատական պատճառները, այլ ոչ թե “խարազանվեն ու պիտակավորվեն” գոհերը:

Արմատացած կարծրատիպերի հետևանքով տարածված է այն տեսակետը, որ երբ տղամարդն է դիմում միգրացիայի, ապա նա՝ որպես ակտիվ սուբյեկտ, գնում է աշխատելու, իսկ երբ նման քայլի դիմում է կինը՝ նա՝ որպես պասիվ օբյեկտ, դառնում է վաճառքի առարկա: Իրականում, հաճախ չի ընկալվում, որ տղամարդը նույնպես կարող է դառնալ թրաֆիքինգի զոհ, իսկ կինը՝ գտնել ոչ հարկադիր աշխատանք:

Այսպիսով, գենդերային տեսանկյունից՝

- թե՛ կանայք, թե՛ տղամարդիկ, թե՛ տղաները, և թե՛ աղջիկները կարող են դառնալ թրաֆիքինգի զոհ.
- կանայք՝ ելնելով հասարակության մեջ ունեցած իրենց ստորադաս կարգավիճակից, ավելի խոցելի են որպես թրաֆիքինգի օբյեկտ.

Այս առումով պետությունը պետք է վարի տարբերակված քաղաքականություն՝ պաշտպանելով զոհին և պատժելով կազմակերպչին.

- քաղաքական, օրենսդրական, ինստիտուցիոնալ և ծրագրային նախաձեռնությունները պետք է լինեն հասցեական և զոհակենտրոն, ուղղված թրաֆիքինգի հետ կապված խնդիրների լուծմանը,
- իրավական իրազեկությունը և իրավական պաշտպանության մատչելիությունը կմեծացնի թրաֆիքինգից խուսափելու հնարավորությունը.

## **2. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) գենդերային տեսանկյունները և առանձնահատկությունները**

Թրաֆիքինգը որպես մարդու իրավունքների հիմնախնդիր ունի նաև գենդերային առանձնահատկություններ: Դրանք համակարգային վերափոխումներից բխող գենդերային իրավիճակի փոփոխությունների արդյունքն են՝ կապված տնտեսական բարեփոխումների հետևանքների, աղքատության գենդերային բնույթի, ինչպես նաև երկու սեռերի սոցիալական նոր դերերի հետ: Սա վերաբերում է աղքատության և գենդերային անհավասարության նոր դրսևորումներ առաջ բերած և թրաֆիքինգին նպաստող հետևյալ երևույթներին, որոնք են՝

- սոցիալ-տնտեսական պայմանների վատթարացում, որոնք մարդկանց դրդում են “դրսում” բարեկեցիկ կյանք, հաջող ամուսնություն, բարձր վարձատրվող աշխատանք փնտրելու, ինչի արդյունքում կարող են հայտնվել թրաֆիքինգի զոհի կարգավիճակում
- մարդու իրավունքների, գենդերային հիմնախնդիրների և թրաֆիքինգի վերաբերյալ իրազեկության պակաս
- միգրացիոն հոսքերի ակտիվացում
- անցում դեպի շուկայական տնտեսություն և զբաղվածություն, ինչպես նաև տնտեսական գործունեության ծավալման որոշակի պարտադրողական սխեմաների առաջացում
- ընտանիքին աջակցելու նախկին համակարգի փլուզման հետևանքով կանանց գործազրկության աճ
- եկամուտների կտրուկ անկման պայմաններում ընտանեկան հարաբերությունների կազմակերպման խալխում և այն տնային տնտեսությունների թվի աճ, որոնցում առաջատար դիրք է գրավում կինը և այլն:

Թրաֆիքինգի տարածմանը մեծապես ազդում են նաև հասարակության պատկերացումները կանանց և տղամարդկանց դերերի ու պարտականությունների, ինչպես նաև նրանց վարքի, արժեքային համակարգի և աշխատանքի գենդերային բաժանման վերաբերյալ: Այրի, ամուսնալուծված, միայնակ կանայք, ընտանիքում “կերակրող” տղամարդ չունեցող, ինչպես նաև կրթություն, հմտություններ և աշխատանք գտնելու համար անհրաժեշտ այլ միջոցներ չունեցող կանայք կարող են ընտանիքի ապահովման սահմանափակ հնարավորություններ ունենալ և խոցելի լինել թրաֆիքինգ իրագործողների համար:

Տղամարդկանցից ակնկալվում է որոշակի գենդերային դերակատարում՝ “ապրուստ հայթայթել” ընտանիքի համար: Նրանք խաբվում են աշխատանքի առաջարկներով՝ հատկապես շինարարության բնագավառում: Կանանց և տղամարդկանց համար սեռական ծառայությունների, ստրկության, հարկադիր աշխատանքի ոլորտներում այլ մարդկանց հսկողության ներքո աշխատելու ամոթը չի համապատասխանում վարքի սոցիալապես ընդունված նորմերին: Նրանց վարքը հակասում է “բարոյական կանանց” և “առնական տղամարդկանց” ներկայացվող պահանջներին և

սպասումներին: Հետևանքն այն է, որ նրանք տուն վերադառնալուց հետո չեն ներկայացնում իրենց հետ կատարվածը՝ նախընտրելով մնալ չբացահայտված:

**Կանանց թրաֆիքինգ:** Մեռական շահագործման նպատակով առավել հայտնի և տարածվածը՝ կանանց և երեխաների թրաֆիքինգն է: Որոշ կանայք և աղջիկներ թրաֆիքինգի են ենթարկվում վաղ ամուսնության, հարկադիր ամուսնության, պայմանավորվածությամբ ամուսնության, ժամանակավոր ամուսնության, կատալոգով ամուսնության (փոստով պատվիրվող հարսնացուներ), երեխայածնության նպատակով ամուսնության եղանակներով: Ամուսնությունն օգտագործվում է որպես թրաֆիքինգը հեշտ իրագործելու միջոց, օրինակ՝ ճամփորդական փաստաթղթեր ստանալու համար: Վերջին տարիներին կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ կանայք օգտագործվում են ոչ միայն սեքս-ծառայությունների, այլև գյուղատնտեսության, արդյունաբերության և հարկադիր աշխատանքի այլ ոլորտներում: ԱՄԿ-ի վերլուծությունները վկայում են, որ տարեկան այդ նպատակով 120.000 կին ու երեխա փոխադրվում են Արևելյան Եվրոպա: Պարզվել է, որ Հարավարևելյան Եվրոպայից վերադարձած և հարցազրույցի ենթարկված 300 զոհերից 23%-ը վաճառվել է հարկադիր մարմնավաճառության, 21%-ը՝ շինարարությունում, 13%-ը գյուղատնտեսությունում աշխատելու համար: Հոլանդիայում, Գերմանիայում, Իտալիայում մարմնավաճառությամբ զբաղվող կանանց 80-90%-ը արտասահմանցիներ են: Վերջին 10 տարվա ընթացքում մարմնավաճառության համար շուրջ 10.000 կին է ուղարկվել Իսրայել: Փոխադրումների նշանակալի աճ է նկատվում ԱՊՀ երկրներից և Բալկաններից: ՄԱԿ-ի հետազոտությունների համաձայն՝ զոհերը հիմնականում 15-ից 35 տարեկան կանայք և աղջիկներ են<sup>45</sup>:

Բարձր եկամուտ ունեցող միջազգային գործարքներում ապրանքի նոր տեսակ է դարձել կնոջ մարմինը: Մեծ քանակով կանայք դուրս են բերվում Մանիլայից՝ Նիգերիա, Բիրմայից՝ Թայլանդ, Բուլղարիայից՝ Եվրոպա, որի արդյունքում կանանց մարմինները հայտնվում են գլոբալ կապիտալիզմի շրջապտույտի մեջ: Կանանց սեքսուալացումը կապված է նաև նոր տեխնոլոգիաների ներդրման հետ: Այսպես, մի կողմից, համացանցը (Ինտերնետը) նպաստում է միգրացիոն հոսքերին, հատկապես հարսնացուների շուկայում կանանց ներգրավմանը, մյուս կողմից՝ սահմանների հսկման ուժեղացման տեխնոլոգիաները խոչընդոտում են և դուրս են մղում կնոջը դեպի անլեզալ սեկտոր:

ՀՀ-ից թրաֆիքինգի ենթարկվող կանայք ուղղակիորեն տարվում են Միացյալ Արաբական Էմիրություններ՝ օրինական անձնագրերով, օրինական ճամփորդական գործակալությունների միջոցով, կամ թրաֆիքինգի կազմակերպչի կողմից ձեռք բերված այլ փաստաթղթերով: Որոշ դեպքերում հայ կանայք կեղծ ամուսնություններ են ձևակերպում: Նրանց դիմավորում են “ամուսինները” կամ թրաֆիքինգ

<sup>45</sup> Ա. Երեմյան, Դ. Թումասյան, Գ. Գրիգորյան: Հայաստանի Հանրապետությունում թրաֆիքինգի դեմ պայքարի իրավական հիմունքները: Ձեռնարկ իրավապահ մարմինների համար: Երևան, 2009: Տես նաև Գ.Ա.Շահինյան, Մարդկանց վաճառք, տեղեկատվական ձեռնարկ: Երևան, 2004:

կազմակերպող շղթայի մյուս անդամները, ովքեր էլ նրանց տանում են “աշխատանքի” վայր: Հայ կանանց թրաֆիքինգի մեկ այլ նշանակետ է Թուրքիան, որտեղ նրանք մեկնում են Հայաստան-Վրաստան և Վրաստան-Թուրքիա ցամաքային սահմանը հատելով<sup>46</sup>:

**Երեխաների թրաֆիքինգ:** Այս երևույթը մեր օրերում ձեռք է բերել միջազգային բնույթ և դարձել է եկամտի աղբյուր: Երեխաների առևտրի շուկան արագ մեծանում է: ԵԱՀԿ ներկայացուցիչները հայտարարում են, որ Հարավ-Արևելյան Եվրոպայից դուրս բերվածների մոտավորապես 30%-ը երեխաներ են: Երեխաների առևտուրը՝ երեխաների նկատմամբ դաժան վերաբերմունքի (բռնության) դրսևորում է և նրանց իրավունքների կոպիտ խախտում:

Երեխաների նկատմամբ դաժան վերաբերմունքը (երբեմն օգտագործվում է “բռնություն” հասկացությունը) տարածված երևույթ է, որի տակ հասկացվում է “ծնողների կամ մեծահասակների կողմից երեխայի նկատմամբ դրսևորվող ցանկացած գործողություն կամ անգործություն, որի արդյունքում կարող է վնասվել երեխայի առողջությունը, բարենպաստ ապրելու հնարավորությունը, կամ կարող են ստեղծվել այնպիսի պայմաններ, որոնք խանգարում են երեխայի նորմալ ֆիզիկական կամ հոգեկան զարգացմանը, ոտնահարում են նրա իրավունքները և ազատությունները”:

Երեխաների նկատմամբ դրսևորվող կոշտ և կոպիտ վերաբերմունքը հատուկ է բոլոր սոցիալ-տնտեսական շերտերին, բոլոր մշակույթներին և ժամանակակից աշխարհի բոլոր երկրներին: Այն արտահայտվում է տարբեր ձևերով՝ ֆիզիկական, հոգեբանական, սեռական բռնության և երեխաների նկատմամբ անփույթ վերաբերմունքով: Երեխաների նկատմամբ սեռական բռնության դրսևորումներից է նրա կոմերցիոն սեռական շահագործումը, որի մեջ մտնում են մանկական պոռնոգրաֆիան, մանկական մարմնավաճառությունը և երեխաների առևտուրը:

Երեխաների առևտուրը նրանց նկատմամբ բռնության ձևերից մեկն է և համարյա միշտ ներառում է նաև բռնության այլ տեսակներ՝ ֆիզիկական (ծեծ), հոգեբանական (ճնշում, վիրավորանք, պարտադրանք, ստորացում), սեռական և այլ: Այս ամենը բացասաբար է արդրադառնում երեխաների առողջության, նորմալ ֆիզիկական և հոգեբանական զարգացման վրա, ինչը խանգարում է նրանց սոցիալական հարմարվողականությանը՝ գրկելով երեխային մանկությունից և պատանեկությունից, պատճառ դառնալով հոգեբանական և այլ վնասվածքների:

Երեխան լույս աշխարհ է գալիս ընտանիքում: Եվ հաճախ նրա ճակատագիրը կախված է այն բանից, թե ինչպիսի ընտանիքում է նա ծնվել: Ավանդաբար ընտանիքը անվանում են դաստիարակության գլխավոր ինստիտուտ: Ընտանիքը երեխայի մերձավոր շրջապատն է, և նրա ազդեցությունը երեխայի անձի ձևավորման և կայացման գործում հսկայական է: Այն, ինչը երեխան ձեռք է բերում մանկության տարիներին, պահպանում է ողջ կյանքի ընթացքում: Հենց մանկության տարիներին է,

<sup>46</sup> Թրաֆիքինգ. սոցիալական աշխատանքը թրաֆիքինգի զոհերի հետ: Երևան, 2010:

որ ենթագիտակցական մակարդակում ձևավորվում է ընտանեկան դաստիարակության մոդելը, որի փոխանցումը սերնդեսերունդ բնական գործընթաց է: Ցավոք, կան ընտանիքներ, որտեղ բռնությունը և անտարբերությունը երեխայի հիմնական կարիքների նկատմամբ սովորական երևույթ են: Դրանք, այսպես կոչված, պրոբլեմային և անբարենպաստ ընտանիքներն են: Այդ ընտանիքների երեխաները, որոնք կարող են դառնալ թրաֆիքինգի զոհեր, կազմում են ռիսկային խումբ: Ռիսկային խմբի մեջ են մտնում երեխաներ՝

- թերի ընտանիքներից, որտեղ առկա է ծնողներից մեկը (հիմնականում մայրը).
- որոնց ծնողները զրկված են ծնողական իրավունքներից կամ գտնվում են ազատազրկման վայրերում.
- որոնք ընտանեկան բռնության են ենթարկվել կամ ականատես են եղել նման դեպքերի իրենց ընտանիքում.
- որոնք դաստիարակվել են ապաստոցիալական միջավայրում, որտեղ ծնողները չարաշահում են ալկոհոլը, թմրանյութեր, թունանյութեր կամ երեխաներն իրենք են օգտագործում ալկոհոլ, թմրանյութեր, թունանյութեր.
- որոնք ենթարկվել են պատասխանատվության օրինախախտության համար.
- այն ընտանիքներից են, որոնց եկամուտները չեն գերազանցում նվազագույն կենսապահովման զամբյուղը կամ ծնողները գործազուրկ են.
- անօթևանները.
- որոնց ծնողները չունեն ընտանիքում հուզական կապվածության փորձ:

Բացի այդ՝ ռիսկային խմբի մեջ կարող են մտնել այն երեխաները, որոնք զրկված են մեծահասակների խնամքից, որոնք բնակվում են երկաթգծի կայանների մերձակայքում, մեծ կայարանների, ավտոմեքենաների կայանատեղերի մոտ և այլ:

Թրաֆիքինգի ենթարկվելու տեսանկյունից ավելի խոցելի են ընտանեկան բռնության զոհ դարձած երեխաները: : Սեքս-ինդուստրիայի մեջ գտնվող երեխաների 80%-ը ընտանիքներում ենթարկվել են հոգեբանական և ֆիզիկական բռնության: “Երեխաները բռնության համար չեն” հասարակական միավորման տվյալներով, սեքս-ինդուստրիայի մեջ ներգրավված երեխաների մի մասը հայտարարել է, որ մտել է այս ոլորտը այն բանից հետո, երբ ծնողները հայտարարել են, թե նրանք անցանկալի ծնունդ են: Իսկ ոմանք էլ մարմնավաճառությամբ զբաղվելը բնորոշել են որպես “օգնության ճիչ” և “սիրված լինելու ցանկություն”<sup>47</sup>:

Թրաֆիքինգի ենթարկվելիս երեխաները կարող են տուժել կրկնակի՝ երևան են գալիս առողջական խնդիրներ, ինչպես նաև բռնության արդյունքում անչափահասների սեքսուալ զարգացումը դառնում է տարիքին անհամապատասխան: Հաճախ անգործության զգացումը կարող է փոխակերպվել ուժի պատրանքի և արդյունքում զոհը դառնա “գայթակղող”: Թրաֆիքինգը ազդում է նաև երեխաների

<sup>47</sup> Вопросы и ответы о коммерческой сексуальной эксплуатации детей. Информационный буклет ECPAT International. 2001. С. 22.

ինքնաընկալման և ինքնագնահատականի վրա, ինչն էլ կարող է նրան դրդել - ոգելից խմիչքների և թմրանյութերի գործածմանը:

Երեխաները վաճառվում կամ ներգրավվում են սեռական շահագործման, մուրացկանության, մանկական պոռնկության և մարմնավաճառության, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի անօրինական շրջանառությամբ զբաղվող հանցավոր խմբերում և զինված հակամարտություններում, կեղծ ամուսնության պատրվակով անօրինական փոխադրումների, տանը աշխատելու համար: ՄԱԿ-ի մարդու իրավունքների գծով գերագույն հանձնակատարի “Մարդու իրավունքների և մարդկանց թրաֆիքինգի առաջարկվող սկզբունքները և ուղենիշները” փաստաթղթի 8-րդ ուղենիշը վերաբերվում է թրաֆիքինգից տուժած երեխաների պաշտպանության և օժանդակության հատուկ միջոցառումներին: Նրանում ասվում է, որ թրաֆիքինգի ենթարկված երեխաների կրած ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական վնասի առանձնահատկությունների, ինչպես նաև շահագործման նկատմամբ նրանց՝ մեծահասակներից ավելի խոցելի լինելու պատճառով, անհրաժեշտ է օրենքների, քաղաքականության, ծրագրերի և միջոցառումների շրջանակում նրանց տարբերակել թրաֆիքինգի ենթարկված մեծահասակներից: Առաջին հերթին պետք է հաշվի առնել երեխաների շահերը: Նրանք պետք է համապատասխան աջակցություն և պաշտպանություն ստանան՝ լիովին հաշվի առնելով նրանց իրավունքների և կարիքների առանձնահատկությունները:

2010 թվականին Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է “Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին” ԵԽ կոնվենցիան:

Աշխատանքի միջազգային կազմակերպությունը հունիսի 12-ը հայտարարել է մանկական աշխատանքի դեմ պայքարի Միջազգային օր, որպեսզի ամբողջ աշխարհի ուշադրությունը կենտրոնացնի մանկական աշխատանքի վերացման անհրաժեշտության վրա: Քանի որ, ԱՄԿ-ի տվյալներով, 5-17 տարեկան ավելի քան 179 մլն երեխաներ աշխատում են վատթարագույն պայմաններում, ինչը սպառնալիք է նրանց հոգեկան և քարոյական առողջության համար: Մոտ 8.4 մլն երեխա գտնվում է ստրկության մեջ, անօրինական ճանապարհով դուրս է բերվել երկրից, ներգրավվել է մարմնավաճառության կամ այլ անօրինական գործողությունների մեջ, և պետք է “անհապաղ վերադարձվի նորմալ կյանքի”, ասվում է ԱՄԿ-ի “Ապագան առանց մանկական աշխատանքի” հաշվետվությունում: Հաշվետվության մեջ նշվում է նաև, որ աշխատող երեխաների մեծամասնությունը զարգացող երկրներում են, թեև 2.5 մլն երեխա աշխատում է նաև արդյունաբերական զարգացած երկրներում:<sup>48</sup>

Հայաստանը ևս զերծ չի մնացել այս մարտահրավերից: “Ներդաշնակ հասարակություն” սոցիալական աշխատողների ասոցիացիայի կողմից 2009

<sup>48</sup> “Ապագան առանց մանկական աշխատանքի” ԱՄԿ-ի հաշվետվություն, 2002: Տես նաև “Յուրաքանչյուր երեխա նշանակություն ունի. մանկական աշխատանքի նոր գլոբալ գնահատումները” ԱՄԿ-ի հաշվետվությունը, 2002:



թվականին անցկացված հետազոտության արդյունքում պարզվել է, որ Հայաստանում երեխաների մեծ մասը պատրաստ են կատարել ցանկացած աշխատանք, եթե իրենց ընտանիքը հայտնվի ծանր նյութական կացության մեջ: 14-17 տարեկան հենց այս երեխաներն են, որոնք հայտնվում են ռիսկային գոտում:

**Տղամարդկանց թրաֆիքինգ:** ԱՄՆ-ի Կենտրոնական հետախուզական վարչության գնահատականներով, թրաֆիքինգի միայն 2%-ն է բաժին ընկնում տղամարդկանց: Ինչպես նշում է Ջ. Լոուրին, Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային ֆեդերացիայի Ուկրաինայի, Մոլդովայի և Բելառուսի ներկայացուցիչը. “Նկատվում է տղամարդկանց թրաֆիքինգի աճ, ինչը պայմանավորված է տնտեսական ճգնաժամով: Տնտեսական ճգնաժամը ճնշում է գործադրում տղամարդկանց վրա՝ նրանց ստիպելով դուրս գալ փողոց և աշխատանք գտնել, որպեսզի կարողանան կերակրել իրենց ընտանիքները: Նման ժամանակներում մարդիկ ավելի շատ են դիմում ռիսկի և ենթարկվում ռիսկի”:

Թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին ԵԽ-ի 2005թ.կոնվենցիայի ընդունումից հետո, տղամարդիկ՝ կանանց և երեխաների հետ հավասար պայմաններում, ճանաչվեցին որպես թրաֆիքինգի զոհ:

ՀՀ-ում առկա գործազրկության բարձր մակարդակը սահմանափակում է տղամարդկանց աշխատանք գտնելու հնարավորությունները՝ դրդելով նրանց աշխատանք փնտրել դրսում: Եվ քանի որ “առնական” տղամարդու կերպարին հարիր չէ հարկադիր աշխատանք կատարելը, ինչը չի համապատասխանում նաև հասարակության մեջ վարքի սոցիալապես ընդունված նորմերին, ապա հաճախ զոհը գաղտնի է պահում թրաֆիքինգի ենթարկվելու փաստը, որն ավելի է ծանրացնում նրա վիճակը:

## **ԹԵՄԱ 5. ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԽՆԴԻՐ**

- 1. Բռնությունը և բռնության տեսակները**
- 2. Գենդերային բռնություն և գենդերային բռնության խնդիրը և բռնության հետևանքները**
- 3. Կանանց նկատմամբ բռնության կանխարգելման իրավական կարգավորումը**
- 4. Բռնության և մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերին աջակցության տրամադրումը և նրանց վերականգնումը**

### **1.Բռնությունը և բռնության տեսակները**

Բռնությունը համընդհանուր խնդիր է, որի դեմ պայքարը գրավում է ողջ աշխարհի ուշադրությունը: Միջազգային նորմերով բռնությունը գնահատվում է որպես մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների խախտում և համարվում է անհանդուրժելի երևույթ քաղաքակիրթ հասարակության համար:

Այն չունի ոչ ազգային, ոչ կրոնական, ոչ մշակութային պատկանելիություն: Բռնության ու դաժանության տարբեր դրսևորումների կարելի է հանդիպել հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտներում՝ ընտանիքում, աշխատանքում, հասարակական վայրերում, ազգամիջյան բախումներում և այլուր: Բռնության գործողությունները կամ դրա կատարման սպառնալիքները, անկախ այն բանից, թե որտեղ և ում կողմից են կատարվում՝ ընտանիքում թե՛ հասարակությունում, անհատի թե՛ պետության կողմից, մարդու մեջ առաջացնում են վախի և անվստահության զգացում, ինչը խոչնդոտում է նրա լիարժեք կյանքին: Բռնության տարբեր ձևերը կարող են ունենալ ընդհանուր արմատներ, բայց ելնելով պետության առանձնահատկություններից և պայմանավորված կյանքի դասավորությամբ, գաղափարախոսությամբ, ավանդույթներով և սովորույթներով դրանք ձևափոխվում են և «տեղայնացվում»: Բռնության արմատները տանում են դեպի՝

- պետական կառուցվածքը՝ օրենքներ, քաղաքականություն, գաղափարախոսություն, տնտեսություն,
  - սոցիումը՝ մշակույթ, բարոյականություն, կրոն, ավանդույթներ, սովորույթներ, ինքը մարդը՝ սնհատական հոգեբանական առանձնահատկություններ
- Համապատասխանաբար բռնության բազմաթիվ ձևերը կարելի է պայմանականորեն խմբավորել 3 կատեգորիայի՝ բռնություն պետության կողմից, գենդերային բռնություն, կենցաղային բռնություն:

Բռնության ամենատարածված դրսևորումներից մեկը գենդերային բռնությունն է: Թեև այսօր չկա գենդերային բռնության մեկ համընդհանուր սահմանում, այնուամենայնիվ այն կարելի է բնութագրել, որպես սեռով պայմանավորված ֆիզիկական, սեռական, հոգեբանական և տնտեսական բնույթի որևէ բռնի գործողություն: Գենդերային բռնության ենթարկված զոհերի ճնշող մեծամասնությունը կանայք և երեխաներ են: Դա պայմանավորված է կանանց, երեխաների և տղամարդկանց իրավունքների և հնարավորությունների առկա անհավասարությամբ և հանդիսանում է սոցիալական այն կարևոր լծակներից մեկը, որի միջոցով կնոջը կամ երեխային ստիպում են ենթակայական դիրք գրավել կյանքի տարբեր իրավիճակներում: Դրանից տուժում է ոչ միայն բռնության անմիջական զոհը, այլ նաև ընտանիքը, և ի վերջո հասարակությունն ու պետությունը:

Մարդու իրավունքների պաշտպանության բոլոր միջոցառումներում առանձնահատուկ ուշադրության է արժանանում կանանց իրավունքների պաշտպանությունը: Խնդրի կարգավորման նպատակով առավել կարևոր լուծումներ են առաջարկվել Մարդու իրավունքների համաշխարհային համաժողովում (Վիեննա 1993թ.), ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված «Կանանց նկատմամբ բռնության արմատահանման մասին» Հռչակագրում (1993թ.), Կանանց 4-րդ Համաշխարհային համաժողովում (Պեկին 1995թ.), ՄԱԿ-ի «Հանցագործության կանխարգելման և իրավախախտողների հետ վարվելու» Համաժողովում (Կահիրե 1995թ.), «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին»

## **2. Գենդերային բռնություն և գենդերային բռնության խնդիրը և բռնության հետևանքները**

Գենդերային բռնության խնդիրը անհրաժեշտ է դիտարկել որպես համալիր սոցիալական խնդիր և ըստ այդմ ձեռնարկել համապատասխան միջոցառումներ ոչ միայն դրա հետևանքների վերացման, այլ նաև երևույթի կանխարգելման համար: Դրանք պետք է ուղղված լինեն ընտանիքի յուրաքանչյուր անդամի կյանքի պաշտպանությանը, ազատության և արժանապատվության պահպանման իրավունքի ապահովմանը, անձի նկատմամբ իրականացվող.

- հանցագործությունների խափանմանը,
- սոցիալական կանխարգելմանը,
- բռնության գոհերին աջակցության տրամադրմանը և նրանց վերականգնմանը:

Հայաստանում բռնություն գործադրելու պատճառական մեխանիզմում հիմնականում առանձնացվում են սոցիալ-տնտեսական ծանր կացությունը, հասարակությունում առկա սոցիալական լարվածությունը, բարոյական արժեքների անկումը, անպատժելիությունը, աշխատանքի շուկայում հավասար հնարավորությունների բացակայությունը, ընտանեկան դաստիարակության հիմքերի քայքայումը, ընտանիքի դերի թուլացումը, հակահասարակական և հակաիրավական արժեքային կողմնորոշումների ձեռնավորումը, հասարակության կոնֆլիկտայնությունն ու սոցիալական խիստ բևեռացումը, ցանկացած միջոցով և ցանկացած եղանակով սեփական պահանջմունքները բավարարելու (այդ թվում՝ բռնի) սովորույթի արմատացումը, ինչպես նաև ինքնահաստատվելու, շրջապատին սեփական կամքը թելադրելու և ուրիշների նկատմամբ իշխելու ձգտումները և այլն:

Գենդերային բռնության տեսակները բազմաթիվ են: Դրա առավել տարածված տեսակը ներընտանեկան բռնությունն է, որը կարող են նպաստել անձի թրաֆիքինգի գոհ դարնալուն և որի ձևերն են՝

սեռական բռնությունը

ֆիզիկական բռնությունը

Էմոցիոնալ և հոգեբանական բռնությունը

սոցիալ-տնտեսական բռնությունը

Ընտանիքում կնոջ հանդեպ բռնությունը գենդերային ստորադասության արդյունք է, որը հասարակությունում ստորև նշված խնդիրների/կարծրատիպերի հետևանք է.

- տղամարդու կողմից կնոջ սեփականաշնորհում, ինչը նպաստում է կնոջ գոհացմանը, դարձնում նրան ավելի ենթարկվող ոչ միայն ամուսնական հարաբերություններում այլև հասարակությունում

- տղամարդու կողմից ընտանիքում եկամտի վերահսկում, ինչը դնում է կնոջը կախվածության մեջ, խորացնում է նրա առանց դրա էլ խոցելի վիճակը
- տղամարդու առնականության պատկերացում՝ կապված գերիշխման/պատվի հետ: Արդյունքում կինը ընկալում է տղամարդուն, որպես ճնշող ուժ, որին պետք է ենթարկվել

Ըստ էության բռնության այս տեսակները փոխկապակցված են և հանդիսանում են ֆիզիկական, հոգեբանական տնտեսական և սեռական բռնությունների համակցություն, որը ձևավորում է կնոջ գիտակցությունը և ազդում է հոգեկանի վրա, խախտում իրականության աղեկվատ ընկալումը, ազդում վարքագծի վրա, խորացնելով խոցելիության աստիճանը տարբեր ռիսկերի նկատմամբ: Երեխաների դեպքում բոլոր այս գործոնների ազդեցությունը կրկնապատկվում է, իսկ ընդհանուր առմամբ այս ամենը քայքայում է հասարակությունը և հասարակական հարաբերությունները:

Բռնությունը նվազեցնում է անձի ինքնուրույնությունը, իսկ կնոջ և աղջիկների նկատմամբ սեռական բռնության պարագայում նրանց սեռական ինքնուրույնությունը: Աշխարհի շատ երկրներում կանայք և աղջիկները դիտվում են, որպես սեռական անսահման հնարավորությունների տրամադրման միջոց, որից օգտվելու «իրավունքը» տրված է տղամարդկանց, «իրավունք», որն անհրաժեշտության դեպքում կիրառվում է ուժի միջոցով: Իսկ ուժի դրսևորման ձևերից մեկը անձի վերահսկումն է (սպառնալիք ընտանիքի անդամների նկատմամբ, երեխաներին պատանդ վերցնելը):

Իսկ բռնություն տեսած կամ բռնության ենթարկված անձինք (առավել ևս երեխաները) հետագայում ավելի լուրջ վտանգների թիրախ են դառնում, շարունակելով իրադարձությունների շրջապատույտը:

Բռնությունը հանգեցնում է տարբեր հետևանքների:

Էմոցիոնալ և հոգեբանական հետևանքներն են՝

- հետվնասվածքային սթրես
- ընկճախտ (դեպրեսիա)
- անհանգստություն, վախ
- զայրույթ, չարություն
- ամոթ, անվտանգության զգացողության բացակայություն, արհամարհանք սեփական անձի հանդեպ, ինքնամեղադրանք

ինքնասպանության մտքեր.

Սոցիալական հետևանքներն են՝

- բռնության զոհի մեղադրանք
- հասարակությունում դերի կորուստ
- մեղադրանք հասարակության կողմից
- օտարում և մեկուսացում հասարակության կողմից

- գենդերային անհավասարության աճ

Հասարակությունների մեծ մասը հակված է մեղադրելու բռնության զոհերին: Այս սոցիալական օտարումը հիմք է ծառայում հետագայում հուզական/ հոգեկան ոլորտում խնդիրների առաջացման վնասների համար, ներառյալ ամոթը, սեփական անձի հանդեպ արհամարհանքը և ընկճախտը:

Հասարակության կողմից մեղադրվելու վախի հետևանքով բռնության զոհերի մեծ մասը կատարվածի մասին չի տեղեկացնում, և փաստորեն դեպքերի մեծ մասը մնում է չբացահայտված:

Գենդերային անհավասարությունը շաղկապված լինելով սոցիալ-տնտեսական, մշակութային և քաղաքական անհավասարության հետ, հանդիսանում է ոչ միայն գենդերային բռնության, այլ նաև սոցիալական ծագում ունեցող մի շարք այլ երևույթների՝ թրաֆիքինգի, ՁԻԱՀ-ի համաճարակի, ակոհոլամոլություն և թմրամոլության հիմնական շարժիչ ուժերից մեկն է:

Վերջին երեք տարիների ընթացքում Հայաստանում անցկացված դիտարկումները ցույց են տալիս, որ թրաֆիքինգի առումով առավել խոցելի են աղքատ, անբարեհաջող ընտանիքների երիտասարդ կանայք, աղջիկները և երեխաները, միայնակ, բազմազավակ մայրերը, ինչպես նաև աշխատանքային միզրանտ տղամարդիկ: Վերը նշված խոցելի խմբի կանայք շատ անգամ թրաֆիքինգի զոհ են դարձել ընտանեկան և այլ բռնությունների արդյունքում:

### **3. Կանանց նկատմամբ բռնության կանխարգելման իրավական կարգավորումը**

Ազգային օրենսդրությունը չի տալիս “բռնության, ներառյալ գենդերային բռնության” հասկացության սահմանումը: Թեև Հայաստանի Հանրապետությունում գոյություն ունեցող որոշ օրենքներ ու օրենսդրական ակտեր պարունակում են գենդերային բռնությանը վերաբերող դրույթներ, սակայն դրանք խիստ անբավարար են:

Կանանց նկատմամբ կիրառված ցանկացած բռնություն որակվում է ՀՀ Քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով, որոնք տուժող են ճանաչում բոլոր անձանց՝ անկախ սեռային պատկանելիությունից: Քրեական օրենսգրքում նախատեսված է միայն մեկ հանցագործություն, որի տուժող հանդիսանում է միայն կինը: Դա ՀՀ քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածն է՝ բռնաբարություն:

Գործող Քրեական օրենսգրքում գերակայում է բռնության դասակարգումն ըստ ոտնձգության օրյեկտի, ծանրության աստիճանի ու գործադրման եղանակի:

«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքում ամրագրված են մարդու վերարտադրողականության հետ կապված հետևյալ իրավունքները.

- 1) ինքնուրույն տնօրինել իր սեռական ու վերարտադրողական կյանքը, եթե դա չի վտանգում այլոց առողջությունը.
- 2) ընտանիք կազմել, ինքնուրույն որոշել իր երեխաների թիվն ու նրանց ծնվելու ժամկետները.

3) պաշտպանված լինել ճնշման բոլոր ձևերից, այդ թվում՝ սեռական շահագործումից և բռնությունից, հարկադրական հղիությունից, արբրտից և վերարտադրողականության իրավունքների այլ խախտումներից.

4) ինքնուրույն որոշումներ կայացնել սեռական և վերարտադրողական առողջության հետ կապված բժշկական միջամտություններ ստանալիս, բացառությամբ կյանքին սպառնացող շտապ միջամտություն պահանջող իրավիճակների և օրենքով նախատեսված այլ դեպքերի:

«Հայաստանի Հանրապետության կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թթ. ազգային ծրագրի» բաժիններից երկուսը վերաբերում են կնոջ նկատմամբ բռնության և կանանց ու աղջիկների թրաֆիքինգի վերացմանը: Բացի այդ, ծրագրի բոլոր միջոցառումներն ուղղված են կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների ապահովմանը, կանանց սոցիալ տնտեսական հարցերի կարգավորմանը, աղքատության և գործազրկության հաղթահարմանը, կանանց նկատմամբ բռնության և թրաֆիքինգի կանխազեղմանը:

Բռնության սոցիալական կանխարգելման համար կարևորվում է.

- բնակչության լայն շրջանում ընդհանրապես, և ռիսկային խմբերում մասնավորապես, քարոզարշավների ու իրազեկման բարձրացմանն ուղղված այլ միջոցառումների անցկացումը, այդ թվում նաև զանգվածային լրատվամիջոցների ընդգրկմամբ: Ավելի եռանդուն և լավ-ուղղորդված հանրային իրազեկության բարձրացման քարոզարշավները անհրաժեշտ են բռնության տարբեր ձևերի դրսևորմանը նպաստող վերաբերմունքի և վարքի դեմ պայքարելու նպատակով: Կարևորվում է նաև հասարակության հետ անմիջական աշխատանքը՝ զոհերի հայտնաբերման, զոհերին տրամադրվող աջակցության լուսաբանման և նրանց նկատմամբ բնակչության հանդուրժողական վերաբերմունքի ձևավորման համար:

- պետական պաշտոնյաների պարբերական վերապատրաստումը
- կրթական բաղադրիչի ամրապնդումը՝ կրթական նյութերի ստեղծումն ու օգտագործումը
- առողջապահական և կրթական հաստատություններում, համայնքային կառույցներում և ոչկառավարական երիտասարդական և մանկական կենտրոններում հոգեբանական, իրավական, խորհրդատվական և սոցիալական ծառայությունների մատուցման հնարավորությունների բարելավումն ու ընդլայնումը
- համընդհանուր, անվճար, շուրջօրյա գործող ”թեժ գիծ” ծառայության ստեղծումը:

Բռնության և թրաֆիքինգի իրավական կանխման խնդիրները լուծվում են պետական և ոչ պետական, մասնագիտացված և ոչ մասնագիտացված մարմինների կողմից:

ՀՀ-ում բռնության կանխման մասնագիտացված պետական մարմիններն են ոստիկանությունը, դատախազությունը, դատարանը և քրեակատարողական հիմնարկները:

Բռնության, այդ թվում թրաֆիքինգի կանխման գործում կարևոր դեր է հասկացվում ոստիկանության գործունեությանը, որի կառուցվածքում թրաֆիքինգի նախականիման, կանխման և հանցագործության բացահայտման աշխատանքները իրականացնելու և համակարգելու նպատակով ստեղծվել է թրաֆիքինգի դեմ պայքարի առանձնացված ստորաբաժանում:

#### **4. Բռնության և մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) թրաֆիքինգի գոհերին աջակցության տրամադրումը և նրանց վերականգնումը**

ՀՀ Սահմանադրության համաձայն՝ ուրաքանչյուր ոք ունի ծերության, հաշմանդամության, հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության և օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք: Սոցիալական ապահովության ծավալն ու ձևերը սահմանվում են օրենքով:

Մասնավորապես, «Սոցիալական աջակցության մասին» օրենքը կարգավորում է ՀՀ-ում սոցիալական աջակցության տրամադրման հետ կապված հարաբերությունները, սահմանում է սոցիալական աջակցության հասկացությունը, կազմակերպման և տրամադրման սկզբունքներն ու կարգը, ֆինանսավորման աղբյուրները, սոցիալական աջակցության կառավարման համակարգը:

Նշված օրենքում տրված են հիմնական հասկացությունների սահմանումները: Մասնավորապես, կյանքի դժվարին իրավիճակը սահմանված է որպես հաշմանդամության, տարիքի հետ կապված ինքնասպասարկման ունակությունների կորստի, հիվանդության, առանց ծնողական խնամքի մնալու, աղքատության, երկարատև գործազրկության, ընտանիքում կոնֆլիկտների, դաժան վերաբերմունքի, բռնության ենթարկվելու, անօգականության, միայնակության, սոցիալական մեկուսացման, դժբխտ պատահարի կամ արտակարգ իրավիճակներում հայտնվելու, ազատազրկման վայրերից վերադառնալու հետևանքով մարդու կենսագործունեությանը խանգարող օբյեկտիվ իրավիճակ, որն անձն ինքնուրույն հաղթահարել չի կարող:

Օրենքում գործածված է «բռնություն» եզրույթը, որը սահմանվում է որպես անձի ֆիզիկական և/կամ հոգեկան անձեռնմխելիության դեմ ուղղված արարք կամ դրա սպառնալիք:

Օրենքի համաձայն, սոցիալական աջակցություն ստանալու իրավունք ունեն կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ՀՀ քաղաքացիները, ՀՀ-ում կացության համապատասխան կարգավիճակ ունեցող օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք, ինչպես նաև ՀՀ-ում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք: Այս դրույթը թույլ է տալիս աջակցել այլ երկրի քաղաքացիներին, որոնք հայտնվել են Հայաստանում և ենթարկվել թրաֆիքինգի:

Օրենքը նախատեսում է ժամանակավոր օթևանի տրամադրում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց: Հոդվածի կիրառումն ապահովելու նպատակով 2006թ. ՀՀ Կառավարությունն ընդունել է «Ժամանակավոր օթևանի տրամադրման կարգը և պայմանները հաստատելու մասին» N614-N որոշումը: Այն կարգավորում է

18 տարին լրացած՝ մշտական կամ ժամանակավոր կամ փաստացի բնակության վայր չունեցող անօթևան, ինչպես նաև ընտանիքում բռնության ենթարկված կամ թրաֆիքինգի հետևանքով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց ժամանակավոր կացարան տրամադրելու, ինչպես նաև նրանց սոցիալական խնդիրներին լուծումներ գտնելու հետ կապված հարաբերությունները:

Վերոհիշյալ կարգի համաձայն.

- ժամանակավոր օթևան տրամադրվում է սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպության կողմից,
- հայերենին չտիրապետող անձանց, հնարավորության դեպքում, աջակցությունը տրամադրվում է իրենց համար հասկանալի լեզվով,
- կազմակերպություն ընդունված հաճախորդն ստանում է սոցիալական, հոգեբանական, բժշկական եւ իրավական օգնություն,
- կազմակերպությունը պետք է ունենա համապատասխան իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող կոմունալ, սանիտարահիգիենիկ և հակահրդեհային անվտանգության անհրաժեշտ պայմաններ, վստահության հեռախոս,
- օթևանը, անհրաժեշտության դեպքում, տրամադրվում է նաև բռնության ենթարկված անձի երեխային՝ նրա օթեւանում գտնվելու ընթացքում,
- օթևանը տրամադրվում է մինչեւ 60 օր տևողությամբ:
- կազմակերպությունում գտնվելու ամբողջ ժամանակահատվածում հաճախորդի նկատմամբ իրականացվում է բժշկական հսկողություն և տրամադրվում համապատասխան բժշկական օգնություն՝ դրա կարիքն առաջանալու դեպքում,
- կազմակերպությունում հաճախորդին տրամադրվում է ժամանակավոր կացարան, օրական 3 անգամ սնունդ, սպիտակեղեն, անձնական հիգիենայի պարագաներ, անհրաժեշտության դեպքում՝ հագուստ, կոշիկ,
- կազմակերպության բժիշկը, սոցիալական աշխատողը, իրավաբանը եւ հոգեբանը, յուրաքանչյուրն իր իրավասության սահմաններում, աջակցում են՝
  - ա) անձը հաստատող փաստաթուղթ չունեցող հաճախորդին՝ անձնագիր կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ ստանալու,
  - բ) ստացիոնար բուժման կարիք ունեցողներին՝ համապատասխան բուժհաստատություն ուղեգրելու,
  - գ) կենսաթոշակի իրավունք ունեցող հաճախորդին՝ կենսաթոշակ նշանակելու,
  - դ) հաճախորդի ընտանիքի անդամներին և հարազատներին հայտնաբերելու (եթե այդպիսիք կան) և, հնարավորության դեպքում, նրանց կորցրած սոցիալական կապերը վերականգնելու,
  - ե) անհրաժեշտ պրոթեզաօրթոպեդիկ և այլ վերականգնողական միջոցներով ապահովելու,) խախտված իրավունքները վերականգնելու և շահերը պաշտպանելու,
  - է) աշխատունակ տարիքի հաճախորդին՝ աշխատանքի տեղավորելու,
  - ը) բժշկասոցիալական փորձաքննություն անցնելու համար անհրաժեշտ փաստաթղթերը ձևակերպելու հարցերում.



թ) բռնության ենթարկված անձի հետ կազմակերպությունում գտնվող երեխային՝ ուսման հետ կապված խնդիրները կարգավորելու հարցում,

ժ) անձի սոցիալական ադապտացիան (հարմարումը) ապահովելու նպատակով՝ ընտանիքի անդամների հետ սոցիալ-հոգեբանական աշխատանքի միջոցով ընտանիքում բարենպաստ մթնոլորտի վերականգնմանը:

- կազմակերպությունից հաճախորդը դուրս է գրվում՝

ա) իր դիմումի հիման վրա,

բ) կազմակերպությունում մնալու համար սահմանված ժամկետը լրանալու դեպքում,

գ) տուն-ինտերնատ ընդունվելու դեպքում,

դ) ընտանիք վերադառնալու դեպքում,

ե) ստացիոնար բուժհաստատությունում տեղավորվելու դեպքում,

զ) կազմակերպության ներքին կարգապահական կանոնները խախտելու դեպքում, այդ թվում՝ ակոհոլ կամ թմրանյութեր օգտագործելու դեպքում,

է) քրեորեն հետապնդելի արարքի կատարման մասին համապատասխան մարմիններից տեղեկատվություն ստանալու դեպքում:

Նման կազմակերպությունները կարող են ստեղծվել ինչպես բնակչության սոցիալական պաշտպանության պետական համակարգի շրջանակներում, այնպես էլ հասարակական կազմակերպությունների կողմից:

Բռնության և թրաֆիքինգի կանխարգելման և գոհերի հետ վերականգնողական աշխատանքի հիմնական պահանջներն են՝ սոցիալական պաշտպանության պատշաճ մակարդակի ապահովումը և մարդու սոցիալական իրավունքների պահպանումը: Անրաժեշտ է, որ պետության կողմից հատկացվեն համապատասխան միջոցներ և ստեղծվեն իրական պայմաններ բռնության (մասնավորապես, գենդերային բռնության) և թրաֆիքինգի ենթարկված անձանց անհրաժեշտ սոցիալական աջակցության միջոցները հասու դարձնելու համար:

Բռնության և թրաֆիքինգի երևույթների կանխումը հնարավոր է միայն պետական մարմինների և հասարակական միավորումների սոցիալական գործընկերության հիմքի վրա: Դա պետք է իրականացնել երևույթների հանդեպ գիտակցված անհանդուրժողական վերաբերմունքի ձևավորմանը և կտրուկ պարսավանքին ուղղված լայնածավալ լուսավորչական աշխատանքի կազմակերպման, ինչպես նաև բռնության և թրաֆիքինգի գոհերին օգնություն տրամադրող մասնագիտացված հիմնարկների ընդլայնման և զարգացման միջոցով:

### **Գրականության ցանկ**

1. Дополнительная Конвенция об упразднении рабства, работорговли и институтов и обычаев, сходных с рабством. Женева, 7 сентября 1956 г.

2. Протокол о предупреждении и пресечении торговли людьми, особенно женщинами и детьми, и наказании за нее, дополняющий конвенцию ООН против транснациональной организованной преступности. 2000.
3. Протокол против незаконного ввоза мигрантов по суше, морю и воздуху, дополняющий конвенцию ООН против транснациональной организованной преступности. 2000.
4. Торговля людьми или незаконный ввоз мигрантов?// Борьба с торговлей людьми. Электронный журнал Государственного департамента США, 2003.
5. Остановим торговлю людьми в странах СНГ. Электронный бюллетень. 2005. #23.
6. Жестокое обращение с детьми. М. 2001, С.8.
7. Вопросы и ответы о коммерческой сексуальной эксплуатации детей. Информационный буклет ЕСПАТ International. 2001. С. 22.
8. Из опыта работы общественного объединения “Дети- не для насилия”.
9. Analysis of Institutional and Legal Frameworks and Overview of Cooperation Patterns in the Field of Counter-Trafficking in Eastern Europe and Central Asia. Research Report. IOM, 2003.
10. Trafficking in Persons: An Analysis of Afghanistan. IOM. Kabul, 2003.
11. Thomas M. Steinfatt. Working at the Bar. Sex Work and Health Communication in Thailand. London, 2002.
12. Thomas M. Steinfatt. Measuring the Number of Trafficked Women and Children in Cambodia: A Direct Observation Field Study. Miami, 2003
13. Stefano Volpicelli. Understanding and Counteracting Trafficking in Persons. The Acts of the Seminar for Women Religious. IOM. Rome, 2004
14. Is Trafficking in Human Beings Demand Driven? A multy Country Pilot Study. IOM. Geneva, 2003.
15. Matthew Gutmann. Trafficking in Men: the Anthropology of Masculinity // The Annual Review of Anthropology, 1997, Vol. 26.
16. Trafficking in Unaccompanied Minors in the European Union Member States - Ireland. Research Summary. IOM. Dublin, 2003
17. Female Juvenile Prostitution: Problem and Response. National Center for Missing and Exploited Children. USA, 2002.
18. Jean D'Cunha. Trafficking in persons: a gender and rights perspective. EGM/TRAF/2002/EP.8
19. Ն.Ասատրյան: Թրաֆիքինգ (մարդկանց շահագործում): Երևան, 2010:
20. Ընդդեմ գենդերային բռնության, իրազեկման հանդիպումներ: Հայաստան, 2008:
21. Ա. Երեմյան, Դ. Թումայան, Գ. Գրիգորյան: Հայաստանի Հանրապետությունում թրաֆիքինգի դեմ պայքարի իրավական հիմունքները: Ձեռնարկ իրավապահ մարմինների համար: Երևան, 2009: